

ԱՐՍԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ

ՇԻՐՎԱՆԶԱԳԻՏԻ

Մա ս երկրորդ

(Շարունակութիւն 1)

I

Երկու ամիս ճանապարհորդելուց յետոյ Բարաթեանները վերադարձան Թիֆլիզ:

Նորապսակների համար Գերասիմ Գերասիմիչը իւր տանը պատրաստել և գեղեցիկ կահուորել էր տւել առանձին սենեակներ: Անդամալոյճը ուրախ էր որդու ամուսնութեանը, միայն երբեմն ինքնուրոյնաբար գլուխը շարժում էր և քնթի տակ ասում. «Եթէ Իսահակը իմ որդին է—հայր Աբրահամի ծնունդը չէ, այս չորացած ոտներս կը կտրեմ, եթէ նա հինգ ամսից աւելի դիմանայ...»:

Սովորական այցելութիւններից յետոյ, նորապսակների համար սկսեց բուն ընտանեկան նստակեաց կեանքը:

Բարաթեանը վճռել էր սահմանափակել իւր նախկին ծանօթների թիւը, չարաբերութիւն պահելով միայն այնպիսիների հետ, որ քիչ թէ շատ հասարակական գիրք ունէին: Մտերեանին նա դուրս գցեց ցուցակից: Բժիշկ Սալամբէկեանը պէտք է ընդունւէր:

Վէջքիւեանի համար, հարկաւ, դռները բաց էին կրունգների վրայ: Դիմաքսեանի մասին նա ասում էր, թէ արժանի չէ համարում նրան իւր տունը թողնել, թէև, միևնոյն ժամանակ, զգում էր, որ վիրաւորած ընկերը յաւիտեան ընդհատել է նրա հետ իւր յարաբերութիւնները:

Է՛սկ քո բոլոր ազգականները և բարեկամները աչքիս վրայ տեղ ունենոյ, ասում էր նա Գայիանէին, թւելով իւր ապադայ շրջանի մարդկանց:

Տիկինը նստած էր ամուսնու դէմուդէմ և լուռ լսում էր նրա որոշումները, առանց ընդդիմանալու, միանգամայն հպատակելով նրա կամքին: Նա նկատելի կերպով նիհարել էր, աչքերի տակը բաւական խորացել էր: Առհասարակ արտասահմանից նա վերադարձաւ շատ փոխւած: Բայց այդ միայն արտաքուստ էր: Իսկ հոգեպէս նա այժմ աւելի բազդաւոր էր, երջանիկ ժպիտը չէր հեռանում նրա շրթունքներից:

Այժմ նա պաշտում էր ամուսնուն և կատարելապէս համոզւած էր, որ ինքն էլ պաշտում է նրանից: Չը կար նրանց փոխադարձ սիրոյ և երջանկութեան վրայ ոչ մի արատ, ոչ մի թեթեւ սուէր: Այսպէս էր կարծում Գայիանէն, և նրա ուրախութիւնը այնքան մեծ էր, որ նոյն իսկ արժանի չէր համարում իրան այդ վիճակին: Երբեմն նա մինչև անդամ արտասուում էր, յուզելով բազդի բուռն զգացումներից: Այդ երջանիկ յուզմունքն էր ազդել առողջութեան վրայ և այնպէս նիհարեցրել նրան:

Նա պատրաստ էր ամբողջ օրը, առաւօտից մինչև երեկոյց, առանց ուտել-խմելու, նստել ամուսնու դէմ ու դէմ, ձեռները նրա ափի մէջ դրած և աչքերը նրա աչքերին շառած: Պատահում էր, որ նա վախենում էր—մի գուցէ մէկ չար զօրութիւն յանկարծ ընդհատի նրանց երջանկութիւնը: Աէ որ նրանք մահկանացուներ են և կարող է մէկը կամ միւսը հիւանդանալ, կամ մի յանկարծակի փորձանքի հանդիպել, կամ մեռնել: Նա սարսափում էր այդ մտքից: Պատահում էր և ուրիշ, աւելի յուզիչ, բան—Գայիանէն կասկածում էր: Թւում էր նրան, որ յանկարծ իւր իսակը կարող է դադարել սիրելուց, սլաղել և աչքը ուրիշների վրայ դարձնել: Ուստի նա անդադար ստիպում էր նրան կրկնել.

«Սիրում եմ և պիտի յաւիտեան սիրեմ»:

Գայիանէին չէր հետաքրքրում զրսի կեանքը: Նա մտաացել էր ամեն բան, և՛ ազգականուհիներին, և՛ ընկերուհիներին, և՛ նոյն իսկ կանանց ընկերութիւնը, որի համար առաջ այնքան աշխատում էր: Ընկերուհիները զանազան կատակներ էին անում նրա հետ, անգամ ծիծաղում էին նրա վրայ: Բայց նա պատրաստ էր ամեն տեսակ ծաղր ընդունել, միայն նրան հանդիստ թողնէին իւր Իսակի հետ:

Այդ միջոցներին քաղաքային ընտրութիւնների պայքարը սկսւել էր: Պետր Սոլոմոնիչը արտասովոր շարժման մէջ էր: Կազմւել էր ընդդիմադիր կուսակցութիւն: Կամենում էին հին իրաւասուններից շատերին հեռացնել, նոր քաղաքազուլու և վարչութեան անդամներ ընտրել:

Իրաւասունների ցուցակից դուրս էին ձգել Պետր Սոլոմոնիչին և Ամբակում Աֆանասիելիչին: Վերջինը համարւում էր քաղաքի շահերի համար փնասակար, իսկ առաջինը—մի աւելորդ, անօգուտ բան: Այսպէս էլ դրւած էր մի տեղական լրագրում. «աւելորդ Բախտամովը»:

Նուանդուն քաղաքացին կատաղել էր: Ամբողջ օրը նա կլուրում ու փողոցներում բողբոլում էր թշնամիների դէմ, քարոզելով.

—Քաղքցիներ, խելքի եկէք, կոօ-մոօները եկել են ուրիշ քաղաքներից, մեր հացը խլել, ուղում են մեր քաղաքն էլ իրանց ձեռքը առնեն:

Ամբակում Աֆանասիելիչը ժողովներ էր կազմում: Առաջին կարգի ընտրողները նրա մարդիկն էին: Երկրորդ կարգի մեծ մասը միջին վաճառականներն էին: Պետր Սոլոմոնիչը պտտում էր իւր կալւածները, վաղօրօք բոլոր խանութպանների ականջին շշնակով ապագայ իրաւասունների անունները:

Նոյեմբերի կիսին Ամբակում Աֆանասիելիչի կուսակցութիւնը տարաւ առաջին յաղթութիւնը: Պետր Սոլոմոնիչը ընտրեց միայն մէկ ձայնի առաւելութիւնով: Դա նրան վշտացրեց, բայց և այնպէս ուրախ էր, որ ընտրեց, որովհետեւ յոյս չունէր ընտրւելու:

—Քանի որ կենդանի ենք, սա մեր ձեռքին կը մնայ,—պարծենում էր նա, ձեռափայտը խփելով պրոսպեկտի մայթին, որի մա-

սին նա առաջին և վերջին անգամ Դուժայում մի ծառ էր ասել ուղիղ երկու բառից բաղկացած՝ պէտք է նորոգել:

Օրը կիրակի էր: Ընտրութեան դահլիճը և միւս սենեակները լցել էին ընտրողների բազմութեամբ: Նատ հետաքրքիր կանանց շարքում երևում էր և Գայիանէն տիկին Բախտամեանի հետ:

Ներքեում տիրում էր անասելի աղմուկ: Նախագահը անընդհատ զանգակահարում էր: Թանձր մթնոլորտի մէջ երևում էր ծաղատ, սեւահեր, շիկահեր, կարմիր և սպիտակ գլուխների մի խաչտապղէր խառնուրդ, որ ճիշդ նկարչի պոլիտորային էր նմանում:

Ամբակում Աֆանասիելիչի կարմրակաշի գլուխը փայլում էր, ինչպէս մի վիթխարի գնդաւեղ ահագին տիկի մէջ խրած: Նա կանգնած էր դահլիճի մի յայտնի տեղում, ոտները միմեանցից մի արշին հեռու դրած, ձեռները դրպանում, փորը դուրս զցած: Հանգիստ ժպտալով, նա նայում էր սկսող պատերազմին, ինչպէս մի զօրապետ, որ կանխապէս համոզւած է իւր զօրքի յաղթութեանը:

Նրա աջ ու ձախ կողմերում կանգնած էին Վէքիլեանը և Բարաթեանը: Վերջինը մերթ ընդ մերթ նայում էր դէպի վեր և ժպտում Գայիանէին: Նորատի տիկինը սաստիկ հետաքրքրւած էր քւէարկութեան հետեւնը: Եթէ իւր Իսակին սեւացնէին, «օօ, նա անչափ պէտք է վշտանար:

Վերջացաւ թերթիկների ընթերցումը: Առաջին ընտրելին Ամբակում Աֆանասիելիչն էր: Վէքիլեանը եօթներորդն էր, իսկ Բարաթեանը քսան ու իններորդը: Ուրեմն յոյս կար ընտրելու:

Ամբակումին ծափահարեցին. նա ընտրւած էր: Անցաւ և Վէքիլեանը:

«Իսակ Գասպարիչ Բարաթով», լսեց յանկարծ նախագահի ձայնը:

Գայիանէի ականջները կարմրեցին, նա դարձաւ մարմնացած լսողութիւն: Նա հետեւում էր նախագահի ձեռին, որ մէկ մէկ բաց էր թողնում քւէները փայտեայ գաւաթի մէջ: Նա ականջ էր դնում քւէներ պարունակող արկղիկի ձայնին, արդեօք շատ է մնում այնտեղ, արդեօք կընարւի իւր պաշտելին, իւր անզուգական Իսակը, որ ահա այնտեղ կանգնած լսօտւում է, ծիծաղում, զարնանում իւր ներքին անհանգստութիւնը քօղարկելու համար:

Եւ նա հռչակեց ընտրած:

Մտախաբութիւնների աղմկից շփոթեալ, նա բարձրացաւ վեր, մտեցաւ Գալիանէին: Նրանք երկուան էլ երջանիկ էին, երկուսի էլ սիրտը բարբախում էր: Գալիանէն տակաւին դողում էր, բայց այժմ ուրախութիւնից: Նրա ընտրածը հասարակութեան ընտրածը դարձաւ: Վաղը միւս օրը նա կը փայլի իւր խելքով, իւր ուսումով, իւր հռետորական տաղանդով: Ահա այժմ կերեւայ, թէ ինչ ոչ ժ է Բարաթեանը և որքան ճաշակ ու խելք ունէր Գալիանէն, որ նրան ընտրեց:

Խուռն բազմութիւնը ձեռքբերով, նրանք դուրս եկան փողոց:

— Աւրան ես, — հացրեց Իսակը:

Գալիանէն աւելի ամուր կսպաւ նրա թեւին: Նա խօսք չէր գտնում իւր երջանկութիւնը արտայայտելու:

— Աւրեմն, — շարունակեց Իսակը, — այսօրւանից ես սկսում եմ հասարակութեանը ծառայել: Այժմ, ծանր պարտականութիւն չանձն առի, էհ, ոչինչ, կաշխատեմ սե երես չը մնալ իմ ընտրողների առաջ: Նորերը հանդէս են գալիս և քշում են ասպարիզից հնէրին: Կեանքի անիւը պտտում է, և ով խելք ունէ, նրա ետեւից պէտք է ձանկի, որ բարձրանայ վերև, որպէս զի նորից գլորւի ցած: Բազդաւորը նա է, որ ժամանակին կ'աշխատի ինքը իջնել, որ չը մնայ անիւի տակ և ջախդախելի: Եթէ ճակատագիրը վիճակել է ինձ յաջողութիւն, կը գրկեմ նրան ուրախ սրտով: Սիրելի, անգին Գալիանէ, եղիր իմ օգնականը, թեւեր տուր ինձ և ես կը սաւառնեմ բարձր մինչև այն աստիճան, որ ամբոխը որ կողմ նայի՝ ինձ և մի'միայն ինձ տեսնի: Սիրոս լցւած է փառասիրութեան զգացումով, և ես կամենում եմ միշտ յաղթել, միշտ առաջ գնալ, միշտ փայլել քո և իմ երջանկութեան համար:

— Իսկ ես այնքան աւելի կը հպարտանամ, կը պարծենամ քո անունով, որքան նա բարձր կը հնչի Գիտնես, ես ուզում եմ, որ դու լինես կամ մի լաւ հռետոր կամ մի յայտնի հասարակական գործիչ, մի խօսքով ես ուզում եմ, որ դու բարձր լինես ամբոխից, որ քեզ յարգեն, պատեն, սիրեն, ինչպէս մի հազարապետ մարդու:

— Հասկանում եմ, հասկանում եմ, քո քնքոջ սրտի մէջ էլ հպարտութիւն և փառասիրութիւն կայ: Օ՛, ես կ'աշխատեմ ար-

դարացնել քո յոյսերը: Այսօր ես իրաւասու ընտրւեցի, իսկ եկող տարի այսօրւայ օրը դու ինձ կը տեսնես դպրոցի հոգաբարձու: Եւ գիտես մի դպրոցի. այնտեղ, ուր այժմ տեսուչ է մէկը, որ ինձ կռիւ է հրատարակել:

Գայլիանէն իսկոյն բնազդմամբ հասկացաւ, թէ նրա խօսքը ում մասին է: Մի անորոշ, անբացադրելի երկիւղ յայնկարծ համակեց նրա սիրտը, և նա յուզւած ձայնով ասաց.

—Ո՛չ, Իսակ, աշխատիր ոչ ռքի հետ չը թշնամանալ: Ես չեմ ուզում, հասկան՞ում ես, չեմ ուզում, որ դու թշնամիներ ունենաս, մարդիկ կարող են քեզ մնասել:

—Ոչ, ոչ չէ կարող ինձ մնասել և ոչ մի թշնամուց ես չեմ վախենում: Մանաւանդ ահա այդպիսիներից և սրա ընկերներից:

Իէ՛մ ու դէ՛մ յապաղ քայլերով գալիս էր Մսերեանը, ձեռները մէջքին դրած և ցրւած հայեացքով նայելով այս ու այն կողմ: Բարաթեանը, գդակը մի արշին վեր բարձրացնելով, գոչեց հայերէն.

—Պատիւ ունեմ...

Մսերեանը հազիւ կարողացաւ հանել գլխից իւր լայնեզր գլխարկը, որ թւերը կտրւած ագռաւի պէս փուռ էր նրա ուսերի վրայ: Մի քանի քայլ հեռանալով, նա կանգ առաւ, մի փիլիսոփայական հանգիստ հայեացք ձգեց զոյգի ետևից, գլուխը շարժեց և արտասանեց.

«Ձեմ կարծում, որ քեզ համար այժմ մեծ պատիւ լինի Մսերեաններին բարևելը»:

Եւ նոյն փիլիսոփայական հանդարտութեամբ շարունակեց իւր ձանապարհը:

II

Ղիմաքսեանի հիւանդութիւնը սուր բնաւորութիւն ստացաւ Բժիշկ Սալամբէկեանը, տեսնելով, որ նա թոքերի բորբոքում ունէ, հրաւիրեց իւր արհեստակիցներից մի քանիսին կոնսելիումի: Վճռեցին, որ հիւանդի շրութիւնը շատ վտանգաւոր է: Նրան ժամանակաւորապէս փոխադրեցին հէնց նոյն տանտիրուհու մօտ մի ուրիշ, աւելի յարմար, սենեակ: Մսերեանը գիշեր ու ցերեկ չէր հեռանում նրա անկողնից:

Մի քանի օր շարունակ Ռիմաքսեանը այնպիսի ծանր վիճակի մէջ էր, որ Սալամբէկեանը սաստիկ վախեցաւ: Մի օր նա իւր երկիւղը յայտնեց Մսերեանին, և երկուսն էլ արտասուեցին իրանց ընկերոջ մասին: Սակայն դա հիւանդութեան տազնապալի օրերն էին, անցան, և հիւանդը նորից առողջանալու յոյսեր տուեց:

Այդ միջոցին դպրոցի գործերը խառնակ դրութեան հասան, Հակառակորդները ուրախ էին այդ անկարգութեանը: Ինիաթեանը մինչև անգամ ցանկանում էր, որ Ռիմաքսեանը այլ ևս անկողնից չը վերկենայ, թէև արտաքուստ ցաւակցութիւն էր յայտնում:

Բայց նրա յոյսերը չիրագործւեցին: Ռիմաքսեանը ամիս ու կէս պառկելուց յետոյ, վերկացաւ և փոքր առ փոքր սկսեց պարապել գործերով: Առաջին շաբաթ հակառակորդները խնայեցին նրան, չէին վրդովեցնում: Բայց անցաւ այդ շաբաթը, և կրկին պատերազմը սկսեց: Ամեն օր նա անախորժ ընդհարումներ էր ունենում, վրդովւում և յուզւում էր, նորից երես առ երես մարդկանց անարդարութեանը հանդիպելով:

Այդ բոլորը, հարկաւ, ազդում էին նրա առողջութեան վրայ, որ բաւական քայքայւել էր: Նա նիհարել էր, գունատւել, այտերը դուրս էին ցցւել, աչքերի շրջանակները և ականջները կիտրոնի պէս դեղնել էին: Չը նայելով իւր յուզվելուն, որ այժմ մարմնաւոր տկարութիւնից էր առաջանում, հոգեպէս չէին կրկնւում այն լսարոյական սարսափելի տազնապաները և ջղաձգումներ, որ այնքան տանջում էին նրան:

Սակայն նա չը կարողացաւ շատ էլ սառնարիւն լսել Բարաթեանի և Վէքիլեանի իրաւասու ընտրւելու լուրը: Նա, որ ծարաւ էր ամեն տեղ հասարակական կռիւների յանուն իւր համոզմունքների, նա, որ երբէք չէր բաւականանում խաղաղ գործունէութիւնով, այժմ սկսեց նախանձել Բարաթեանի և Վէքիլեանի դիրքին: Եթէ այդ մարդիկ ստացած լինէին փողով վարձատրուող աւելի բարձր պաշտօններ, նա գուցէ նրանց ծաղրէր, ենթարկէր իւր կծու հեղնութեանը: Բայց տեսնել նրանց հասարակական այնպիսի պաշտօններում, ուր պէտք է գործէին գործելու համար, անվարձ, պէտք է ծառայէին հասարակութեանը իրանց խելքի և զիտութեան պաշարով—այդ նրա համար անախորժ էր: Այս հանգամանքը նա մի

տխուր ապացոյց էր համարում այն բանի, թէ հասարակութիւնը հող է պտորաստել այնպիսի գործիչների համար, որոնք այժմ նրա գաղափարական հակառակորդներն էին:

Ծանր աշխատութեան, չամառ ջանքերի և ընդհարումների շնորհով նա յաջողել էր դպրոցի մէջ մտցնել կարելի փոփոխութիւններ: Այժմ գիշերօթիկները հազնուում էին աւելի լաւ, աւելի մաքուր, ուտում էին աւելի թարմ և աննշարար կերակուրներ:

Դպրոցի խարխուլ շինութիւնը պահուում էր օրինակելի մաքրութեամբ: Հեռացրած էին մի քանի կոպիտ, ծոյլ և պղերգ վերակացուններ: Աշակերտները վայելում էին աւելի ազատութիւն: Նրանց մշտական թախծալի և մաւյլ դէմքերի վրայ երևում էին զւարթութիւն, ժպիտ և ծիծաղ: Ձրկար այլ ևս առաջաց վախը ուսուցիչներից և վերակացուններից: Կար միայն սէր և յարգանք:

Խստութեանը փոխարինել էր խելացի գիտնակցական մարդավարի յարաբերութիւնը: Աշակերտները պարապում էին աւելի եռանդով, աւելի սիրով և աւելի յաջող: Նրանք գոհ էին իրանց վիճակից և հասկանում էին, թէ ումն են պարտական այդ փոփոխութիւնով: Դիմաքսեանին նրանք յարգում էին և սիրում ինչպէս իրանց հազւագիւտ հովանաւորին և պաշտպանին: Եւ ոչ ոք չէր կարող այդ պաշտպանի մասին մի վատ խօսք ասել. ոչ ոք իրաւունք չուներ նրա անունը արտասանել առանց յարգանքի, եթէ չէր կամենում ենթարկել ծաղրի, առեղութեան, այն, մինչև անգամ հալածանքի:

Մինչ այս մինչ այն՝ ձմեռը անցաւ:

Դիմաքսեանը բոլորովին կազդուրւեց, և դարձեալ զգում էր գործելու, պատերազմելու, հարւածելու և հարւածներ ստանալու անսահման եռանդով: Բայց հասաւ գարունը, և նրա մէջ անսպասելի կերպով տեղի ունեցաւ մի տարօրինակ յեղափոխութիւն: Նրա եռանդը սկսեց թուլանալ, բարոյական ոյժերը տկարացան. նրան տիրեց մի ինչ-որ ծանր, ճնշող թախծութիւն:

Կեանքը նրա համար առաջին անգամ թուաց տաղտկալի իւր բոլոր աղմուկներով և իրարանցումներով: Այժմ նա թէ դպրոցում և թէ տանը պարապում էր ակամայ: Ոչ մի միտք, ոչ մի ներական գաղափար առաջաց չափ նրան չէր գրաւում:

Նրա հողին ձգտում էր դէպի մենութիւն: Նա ուզում էր առանձնանալ մարդկանցից և անձնատուր լինել իւր մեյամաղձիկ, անորոշ մտախոհութիւններին: Աւարտելով դասերը դպրոցում, նա կամենում էր հանգստանալ—չէր կարողանում, փորձում էր կարգալու գրել—անաջող: Նա դուրս էր գալիս անից և թափառում դէս ու դէն, ինչպէս թանգագին, անփոխարինելի կորուստ կրած մի մարդ, որ ոչ մի տեղ հանգստութիւն չէ դնում:

Երբեմն նա դնում էր որ և է այգի, մտնում էր նեղ ձեմե-լիքները: Կար մի դառն, բայց, միևնոյն ժամանակ, ախորժելի բան այդ առանձնութեան մէջ:

Ժամերով նա դիտում էր արեգակի ճառագայթների ուրախ խաղը ծառերի նորաբողբոջ տերևների հետ, ականջ էր դնում օդի հանդարտ շշուկին, թռչունների ուրախ ծըլըլոցներին: Նա պառկում էր նորաբոյս դալար խոտի մէջ, խոնաւ գետնի վրայ, երեսը դէպի վեր և աչքերով հետևում գարնանային կապոյտ երկնակամարում նազելի և հպարտ կերպով սահող ամպերին:

Թեթև, հեշտաշունչ, նօսք օդը, լեռնային մաքուր զեփիւռի պէս թափանցում էր մինչև նրա ոսկորների խորքը: Թեւատարած ուրուրները սլանում էին անհուն բարձրութեան վրայ սևորակ ամպի փոքրիկ բեկորների պէս: Եւ նրանց երկսայր սուերները մեղմիկ և արագ սահում էին գետերի մակերևոյթով, լեռների կրճքով, անտառների գագաթներով, դաշտերի և մարգերի վրայ:

Սովորաբար նա նստում էր գետի ափից ոչ հեռու մի վիթ-խարի կաղամախի տակ: Եւ այստեղ դառն ու ախորժելի զգացումը աւելի սաստիկ էր համակում նրա սիրտը: Մոռացում էր իրականը, միտքը ահամայ, ինքն ըստ ինքեան, սլանում էր դէպի երկնքի խորութիւնը: Թեւաւոր թազուհիների եթերային բարձրութիւնը, հեռաւոր ամպերի վսեմ ընթացքը, ափեղբքի անհուն, անհասանելի ծաւալը ընդլայնում էին նրա երևակայութեան հորիզոնը: Նրա իմացականութիւնը թռչում էր բարձր, քան ուրուրները, հեռու քան ամպերը, արագ, քան արևի լոյսը, և այնտեղից դիտում դէպի վեր երկինքը, դէպի վայր երկիրը:

Մերթ ընդ մերթ մի աններդաշնակ աղմուկ, մի կոպիտ ձայն ընդհատում էր նրա մտածմունքների թելը և նրա ուշը դրաւում

դէպի շուրջը: Դա զբօսնող մարդկանց ձայներն էին, մի երեխայի ուրախ ձիչ—անախորժ, մի պառաւ դայեակի բարկացոտ ձայն—աւելի վատ, կամ մի երիտասարդ մօր զւարթ քրքինջ—նոյնքան տաղտկալի:

Նա երեսը իսկոյն դարձնում էր և դարձեալ նայում դէպի վեր: Այնտեղ շարունակ սլանում էին ուրուրները, սուր աչքերով ցածում որսեր որոնելով: Մառերի խիտ ձիւղերի մէջ թագնւած ճնճղուկները անընդհատ ծլււլում էին, ինչպէս լարած մեքենայիկներ: Գետի հանդարտ հոսանքը թմրեցուցիչ օդի մէջ տարածում էր մեղմ շշուկ, քաղցր մեղեդիով օրօրելով մարդկային լսելիքը: Արևի հեշտալի պայծառ շողքերը գետափի պարզ ձահիճների կանաչագոյն մակերևոյթի վրայ գոյացնում էին բիւրաւոր ադամանդներ:

Նա ուզում էր նիրհել: Նիրհել ընութեան ծոցում, հեռու մարդկանց իրարանցումից, հեռու աշխարհի ապականւած ալիքներից: Հեռու նոյն իսկ իւր հոգու այն տարրերից, որ քսանութամեայ գոյութեան ընթացքում անխախտելի կապ էին հաստատել նրա և մարդկութեան մէջ:

Սակայն նրա սիրտը անդորր չէ: Այնտեղ բարձրացել է մի նոր ալէկոծութիւն, հոգին խռոված է, միտքը շփոթւած:

Եւ նա հառաչելով և դառն մեղամաղձութեամբ արտասանում է.
«Ա՛խ, որքան տխուր է ապրել առանց սիրոյ...»:

III

Պետօր Սուլմանիչը հիացած էր իւր պրօտեժէներով: Զէր անցել չորս ամիս, երիտասարդ իրաւասունները արդէն ցոյց էին տալիս, թէ որքան հասկանում են իրանց պաշտօնի բարձրութիւնը: Ամեն մի նիստին նրանք նոր հարցեր էին զարթեցնում, գրգուելով հին իրաւասուններին և ուրախացնելով նորերին, որոնց ամենածարտար օրգանը Բարաթեանն էր:

Գայիանէն ամեն երկուշաբթի երեկոյ այցելում էր Դումայի նիստերը և հրձկանքով լսում իւր ամուսնու ճառերը: Բարաթեանը խօսում էր հանգիստ հոգով, անվրդով, առանց շեղելու և շփոթւելու, ինչպէս մի փորձառու հռետոր: Երբեմն նա իւր ճառը համեմում էր սրամիտ դարձւածներով, որով պակաս հաճութիւն չէր

սլատճառում լսողներին: Կարճ ժամանակում՝ նա դարձաւ շատերի սիրելին, չարգելի դիրք բռնելով իրաւասունների շարքում: Նրան ընտրեցին մի քանի մասնաժողովների անդամ:

Նա թողել էր կրակից սպահովող ընկերութեան գործակալի սլաշածնը: Դա նրա համար մի մեծ նիւթական կորուստ էր այժմ: Հասցը տալիս էր նրա տնային ծախսերը: Կնոջ կալածներից ստացւած եկամուտը ծածկում էր նրա միւս ծախսերը, և նա ապրում էր այնքան սպահով, որ փողի համար ծառայելու կարիք չունէր: Բացք որպէս զի ձրիակեր որդու և սարազիտ աւուսնու հոշակ չը վայելի, նա դնեց մի նշանաւոր արդիւնաբերական տան մի քանի բաժնետոմսեր: Միևնոյն ժամանակ, սուր աչքերով տիրում էր, թէ որտեղ կարելի է մի արդիւնաւոր և քիչ աշխատութիւն սահանջող սլաշածն գտնել, ոչ այնքան փողի, որքան իւր դիրքը աւելի ամրացնելու համար:

Այսպէս թէ այնպէս այժմ՝ նա վարում էր հանգիստ, բաղդաւոր և գործունեաց քաղաքացու կեանք: Առաւօտը զարթնում էր տասը ժամին, աչքի էր անցկացնում տեղական լրագիրները: Գաջիանէի հետ զւարճախօսելով թէ էր խնամ, յետոյ առանձնանում իւր սենեակը՝ սարասուելու: Նա գրում էր Ֆինանսական — անտեսական մի շարագրութիւն քաղաքային գործերի մասին: Ցասներկու ժամին նա նախաճաշում էր և անից դուրս գալիս՝ չաշում էր նա երեկոյեան հինգ ժամին կամ աւելի ուշ — Ֆրանսիական ձևով: Այնուհետև մի փոքր հանգստանում էր: Յետոյ եթէ նիստ ունէր — գնում էր, եթէ ոչ — Գաջիանէի հետ այցելում էր թատրոն կամ մի ուրիշ տեղ:

Երբեմն նա երեկոյեան տնից դուրս էր գալիս մենակ և վերադառնում էր ուշ զիշերին: Այդ ժամանակ Գաջիանէն անհանգիստ սպասում էր նրա վերադարձին, նստած լուսամտի մօտ, ականջները լարած սպասելով կառքի ձայնին:

Ներս էր մտնում Բարաթեանը մերթ ուրախ ու զւարթ և մերթ մտազբաղ դէմքով: Գաջիանէն նայում էր նրա աչքերին, միշտ աշխատելով այնտեղ կարգալ նրա հոգեկան տրամադրութիւնը: Այս սովորոյթը չաճախ բարկացնում էր Բարաթեանին, և նա մեղմիկ, բարեկամաբար ջանդիւնանում էր կնոջը: Գաջիանէն զուլսը

Թեքում էր կրծքին և լուում: Նրա հոգու խորքում կրկին զարթնել էր վաղուց մոռացած, վաղուց լսեղդած չար կասկածը: Նա զգում էր ակամայ անհանգստութիւն: Միմեանց ետևից նրա գլխում չղանում էին զանազան մտքեր, մէկը միւսից վատ, ատելի և զարշելի: Նա ինքը զգում էր այդ մտքերից և աշխատում էր խոյս տալ նրանցից, ինչպէս մի չարագուշակ երևոյթից, որ սպառնում էր խել նրա հոգեկան անդորր երջանկութիւնը, բայց չէր յաջողում: Միշտ այդ մտքերը հետևում էին նրան ուր և լինէր ինչ և անէր:

Բարաթեանի սուր աչքերից, հարկաւ, չէր կարող խուսափել այս փոփոխութիւնը: Ծրբեմն նա հասարակ, անփոյթ կերպով հարցնում էր.

— Դու անհանգիստ ես, Գայիանէ:

— Ո՛չ:

— Ինչո՞ւ ես այդպէս մտիկ անում ինձ և հառաչում:

Գայիանէն կամ մի կերպ խոյս էր տալիս պատասխանից կամ բռնի կերպով ծիծաղում էր և փաթաթում ամուսնու պարանոցին: Կեղծիքը և արևեստականութիւնը այնքան պարզ էին, որ աննկատելի չէին կարող մնալ Բարաթեանի համար:

Մի գիշեր Բարաթեանը տուն վերադառնալով, տեսաւ, որ Գայիանէն լալիս է: Այդ առաջին տխուր արցունքն էր, որ նա տեսնում է կնոջ աչքերի մէջ:

— Ի՞նչ է, պաասհել:

— Ոչինչ:

— Դու էլի յուզւած էիր:

— Այո՛:

Բարաթեանը մէջքից թեքւեց, համբուրեց նրան, արտասանելով.

— Գուցէ նրանիցն է:

— Այո՛... չը գիտեմ... կարող է լինել...

Եւ երկուսն էլ խորհրդաւոր կերպով նայեցին միմեանց երեսին, երկուսն էլ լռեցին:

Այնուհետև Բարաթեանը յաճախ տեսնում էր նրան արտասուելիս: Նա միշտ պատճառը վերագրում էր կնոջ ընտանի զրու-

Թեանը, աշխատելով մոռանալ ուրիշ, աւելի կարեւոր, աւելի հիմնական պատճառներ: Նա ճիշտում էր Գալիանէին զւարճացնել սրախօսութիւններով: Նա պատմում էր ծիծաղաշարժ դէպքեր Գումայի նիստերից, ներկայացնում էր այս կամ այն իրաւասուին, ինչպէս մի տաղանդաւոր դերասան: Նրա կոմիքական ձեւերը Գալիանէին չէին դուր գալիս, որքան ևս ծիծաղելի և զւարճալի լինէին: Կինը ցանկանում էր, որ ամուսինը աւելի ծանրաբարոյ լինի, աւելի լուրջ, ինչպէս վայել էր նրա զիրքին և հասակին: Բայց և այնպէս այդ միջոցներին նա երջանիկ էր, որովհետեւ ամուսնու հետ էր: Իսկ յետոյ... երբ Խակը դուրս էր գալիս տնից, երբ մնում էր մենակ, սկսում էին տխուր, անտանելի ժամերը: Նրա սրտում նորից բարձրանում էր սաստիկ ալէկոծութիւն:

Ինչե՞ր էր երեւակայում, ի՞նչ սարսափելի տեսարաններ չէին ներկայանում նրան: Քւում էր նրան, որ Խակը այժմ նրան չէ սիրում, ձանձրացել է բոլորովին... Այժմ, աւելի քան երբէք, նա խոյս էր տալիս ազգականներից: Այցելողներին ընդունում էր ուրախութեամբ, իսկ ինքը ոչ մի տեղ չէր ցանկանում գնալ:

Երբեմն գալիս էր նրա մօտ տիկին Բախտամեանը և ամեն անգամ յանդիմանում էր, թէ սառել է դէպի իւր ամենամօտիկ ազգականները, որ աչքի լուսի պէս են սիրում նրան:

— Այդպէս շուտ գոռոզացար, — ասաց մի անգամ տիկինը:

— Ես չեմ գոռոզացել:

— Ուրեմն, ինչո՞ւ չես գալիս: — Հասկանում եմ, հասկանում եմ, մարդդ չի թողնում: Նա չի ուզում քեզանից բաժանուել. այնքան սիրում է քեզ: Գիտես, Գալիանէ, ես շատ ուրախ եմ, որ այդպիսի ամուսին ձարեցիր: Իսակ Գերասիմիչը օրինակելի է, նա քեզ պաշտում է, նա հոգին չի լսնայիլ քեզ համար: Ուրախացիր, ուրախացիր, որ այնպիսի ամուսին ունես, դա երկնային երջանկութիւն է:

Գալիանէն ոչինչ չը պատասխանեց: Տիկնոջ խօսքերի մէջ նա զգում էր նուրբ, հազիւ ըմբռնելի հեգնութիւն, որ կծու կերպով շօշափում էր նրա զգայուն սիրտը: Յանկարծ նրանց աչքերը հանդիպեցին միմեանց, և ինչպէս երկու միմեանց հերքող հակառարբեր, իսկոյն արագութեամբ խոյս տւեցին իրարուց:

Տիկին Բարաթեանը նկատելի կերպով շփոթեց, բայց նոյն վայրկեանին զսպեց իրան: Գայիանէն սրտում զգաց մի անտանելի ատելութիւն և երկիւղ դէպի այդ կինը: Կարծես, նրա առաջ նստած էր մի ռիսերիս թշնամի, մի վտանգաւոր, սարսափելի թշնամի, որ իւր քնքոյշ բարեկամական ձևերի տակ թաղցրած էր մի կորստաբեր ձգտում: Նա պատրաստ էր հէնց իսկոյն, նոյն վայրկեանին ցոյց տալ դռները կամ մի թունաւոր խօսքով վիրաւորել նրան: Բայց ինչու, ինչ փաստի հիման վրայ, ինչ մի շօշափելի արարքից դրդւած...

Երկիւղը, կասկածը և ամօթխածութիւնը կաշկանդեց նրան: Նա աշխատեց խեղդել իւր սրտի մէջ բռնկւած թշնամական զգացումը:

Տիկին Բախտամեանը արդէն տիրել էր ինքն իրան: Այժմ նա հանգիստ խօսում էր սուրբայ բաների մասին, և այնպէս, որ կարծես, ոչինչ չէր տեսնում կամ զգում: Նա մինչև անգամ ուշադրութիւն չէր դարձնում Գայիանէի լռութեան վրայ, որ ուրիշ անգամ կարող էր վիրաւորել նրան մինչև հոգոյ խորքը:

Նա հանդարտ վերկացաւ և, ամուր սեղմելով Գայիանէի ձեռը, դիմեց դէպի դռները: Գայիանէի մարմնով անցաւ մի տարօրինակ սարսուռ: Երբ իւր ձեռը զղաց նրա ձեռի մէջ, սարսուռ, որ մարդ կարող է զգալ, երբ նրա մարմնին չանկարծակի կալում է մի խոնաւ, սպառ և թունաւոր սողուն: Ճանապարհ դնելով Բախտամեանին, նա անցաւ իւր ննջարանը, գլուխը դրեց բարձին և ձեռներով ամուր բռնեց գլուխը:

«Միթէ ես չեմ սխալուում, միթէ ես չեմ սխալուում», կրկնում էր նա, աւելի ու աւելի սեղմելով գլուխը:

Հետզհետէ նա դառնում էր զգայուն, դիւրագրգիռ: Երբեմն նա ցոյց էր տալիս կայրիղներ՝ նոյն իսկ ուռել խմելու վերաբերմամբ: Մերթ նա պահանջում էր մի որ և է տարածամ սրտուղ, որ անհնարին էր գտնել, մերթ ուտում էր այնպիսի բաներ, որ ուղղակի վնասակար էին:

Բարաթեանը, այդ կայրիղները տանելով, երբէք չէր վրդովւում, երբէք չէր բողբոջում, որովհետև գիտէր «բնական» պատճառը: Բայց, կատարելով կնոջ պահանջները, երբեմն այնպիսի խոնարհ

և հեղ դէմք էր ցոյց տալիս, որ տեսնողը կարող էր կարծել, թէ նա մի տեսակ կամաւոր նահատակ է մի քմահաճոյ կնոջ ձեռքում: Դա մի ինքնուրոյն խելացի միջոց էր Քաջիանէի սրտից որոշ կասկածները հեռացնելու համար...

Ամբողջ օրը նորատի տիկինը իւր ձեռով կտրում էր, ձևում և կարում՝ փոքրիկ, մանկական գլխոցներ, շաբիկներ և սաւաններ: Պահարանը արդէն լցել էր, բայց նա չէր դադարում նորերը կարելուց, և ամեն բան ուղղում էր ինքը անել:

Այդ զբաղմունքը նրան պատճառում էր անսովոր հաճութիւն: Երբ նա ծայում էր և իւր գեղեցիկ մատներով հարթում մի թիղաւափ շաբիկները, նրա երեսի վրայ խաղում էր մի հանդարտ, անդորր ժպիտ: Նրա մտքը սլանում էր հեռու, երևակայութիւնը կենդանի պատկերացնում էր այն փոքրիկ արարածին, որի քնքոյշ փխրուն մարմնիկը պէտք է ծածկէր այդ ձերմակեղէնով: Արդեօք սում կը նմանի—հօրը թէ մօրը, բաց-կինամոնագոյն աչքերով կը լինի, թէ կապոյտ աչքերով:

Այդ միջոցներին պատահում էր, որ նա յանկարծ գլուխը բարձրացնում էր և ձեռը դնում կրծքի վրայ: Նա զունատում էր, շրթունքները մեղմիկ ցնցում էին և աչքերի մէջ ցոլանում էր երջանկութեան հետ և սարսափը: Յետոյ, ծանր շունչ քաշելով, մեկամաղձիկ ու երկիւղած դէմքով նստում էր անկողնի վրայ: Աչքերը լցում էին արցունքով, և նա հանդարտ ու կամացուկ լալիս էր, ինչպէս առաւօտները ցողում է զարնանային ամպամած և խաղաղ երկինքը:

Եւ որքան մօտենում էր տաղնապալի օրը, այնքան աւելի Քաջիանէն դառնում էր զգացուն, փափկասիրտ, այնքան նրա քմահաճութիւնները աւելանում էին:

Մի անգամ նա ամուսնուց պահանջեց, որ նա տնից չը դուրս գայ, միշտ, առաւօտ-երեկոյ նստի իւր մօտ:

—Դու կատմիկ ես անում, Քաջիանէ, — հարցրեց Բարաթեանը զարմացած:

—Ես կատակ չեմ անում, լուրջ եմ ասում, դու միշտ պէտք է իմ մօտ լինես, միշտ:

—Ինչո՞ւ:

—Ես այսպէս եմ ուզում:

—Շատ լաւ, սիրելիս, ես բաղդաւոր կը լինէի մի վայրկեան անկամ չը հեռանալ քեզանից, բայց գործերս ձկ կը կատարի:

—Ես չը գիտեմ, ինչ ուզում ես, արա՛ւ Դու գործ չունես, ինձ խաբում ես, դու ազատ ես, չեմ ուզում, որ դու ինձանից հեռանաս: Վախենում եմ, ինքս ինձանից սարսափում եմ: Ինձ անսպասուած մի վատ բան պէտք է պատահի:

—Պատահելու է այն, ինչ-որ բնականաբար պէտք է պատահի: Դու առաջինը չես և ոչ էլ վերջինը, մի՛ վախենար, սիրելիս, ամեն բան յաջող կանցնի:

Նա մի քնքոյշ, սիրալիր, ջերմ համբոյր քաղեց Գայիանէի դունատ այտից:

—Ո՛ր, ինձ խօսքերով մի մտիթարիր, գործնի՛ց ցոյց տուր, որ սիրում ես, գործով: Սիրտս դողում է, երբ մենակ եմ մնում, առանց քեզ: Էնրանից չէ, հասկացիր, ուրիշ բան է, ուրիշ բան...

—Ուրիշ բան...

—Այո՛, այսինքն դու... դու... ինձ չես սիրում, դու ինձանից փախչում ես, ի հարկէ, ես տգեղացել եմ, օօ, ես զիտեմ, դու լաւ մարդ չես:

Եւ նա սկսեց հեկեկալ:

—Գայիանէ, դու ջղաջին ես, տկար ես, ի հարկէ, այդ հասկանալի է: Բայց իզուր ես ինքդ քեզ յուզում, այդ վտանգաւոր է, քեզ հանգստութիւն է հարկաւոր:

—Հարկաւոր է, ուրեմն թող ինձ, որ հանգիստ լինեմ: Ասա՛, որ դու ինձ սիրում ես...

—Ի հարկէ, սիրում եմ, միթէ դա նորութիւն է, որ ասեմ:

—Ուրեմն քո աչքը ուրիշի վրայ չէ, իմ տղեղութիւնը... այ՛ տեսնում ես, ինչպէս փոխել եմ... քեզ չեմ զգեցնում: Այնպէս չէ՛ր ասա՛, Քս եմ միայն քոնը, դու ի՛նձ ես պատկանում հողով ու սրտով:

—Քեզ և միմիայն քեզ եմ պատկանում:

—Եւ յաւիտեան իմը պէտք է լինես:

—Յաւիտեան քոնը և այն փոքրիկինը:

— Փոքրիկը... Ախ, ես ինչ չիմար եմ, ճշմարիտ է, զուրան չես թողնիլ, զուրան մօրը չես զոհիլ մի ուրիշին, Համբուրբը ինձ, հասրուրի...

Այս տեսարանը կրկնում էր գրեթէ երկու-երեք օրը մի անգամ պէս պէս փոփոխութիւններով:

Վերջապէս, Բարաթեանը սկսեց ձանձրանալ կնոջ մշտական կասկածներէից, նախանձից և կապրիզներից: Մի օր նա, երեսը արտասուող Գայիանէից դարձնելով, արտասանեց.

«Օհ, ինչ տաղակալի է կնոջ չափազանց սէրը...»:

IV

Նոյն միջոցներին Պետր Սոլովոնիչը զարմացած էր մի բանի վրայ. արդէն Գայիանէն բաւական ժամանակ էր չէր այցելում իւր քեռին, այն ինչ՝ նրա ամուսինը ճիշդ շարաթը երկու անգամ ներկայանում էր պատկառելի քաղաքացիին: Նա պատճառը հարցնում էր կնոջից և մի դրական պատասխան չէր ստանում:

— Ասուած գիտէ ինչու չէ գալիս, երևի, մա դամ է դարձել, փքւել է, — ասում էր տիկին Բախտամեանը:

Պետր Սոլովոնիչը հարցնում էր Բարաթեանից, և սա նոյն անորոշ պատասխաններն էր տալիս. «Ժամանակ չունէ, տկար է, ւանջարմար է համարում տնից դուրս գալ: Հարկաւ, այդ բոլորը Պետր Սոլովոնիչին չէին գոհացնում: Նա դուշակում էր, թէ կայ, անշուշտ, մի ուրիշ, աւելի հիմնաւոր, պատճառ: Նա տեսնում էր, որ իւր կինն էլ մի առանձին ցանկութիւն չէ յայտնում Գայիանէին տեսնելու, թէև արտաքուստ տրտնջում է նրա չը գալու դէմ:

— Ինձ այնպէս է թւում, որ ձեր միջով սե կատու է անցել, — ասաց, վերջապէս, մի անգամ ծերունին:

Տիկինը քմքածիծաղ տւեց: Ինչո՞ւ պիտի սե կատու անցներ. ինչ հաշիւ ունէ չա Գայիանէի հետ այսուհետեւ:

— Ես պարտքս կատարեցի, վերջացրի, խօս՛ւմ կարող էլի նրա համար մայրութիւն անել:

«Մայրութիւն» բառը տիկինը այնպէս գրդաւած, այնպիսի զղանքով արտասանեց, որ, կարծես, խօսքը աղախին լինելու մասին լինէր:

Հարցը մնում էր հարց, և Պետր Սոլոմոնիչը, ուսերը վեր քաշելով, չէր կարողանում հասկանալ կնոջ սաւնութեան պատճառը:

Մի օր նա իրիկնադէմին կլուբից վերադարձաւ սովորականից շատ վաղ: Նա չափազանց վրդոված էր և ինքն իրան խօսուէ էր: Նրա երեսին գոյն չը կար, իսկ աչքերի մէջ փայլում էր մի անսովոր բարկութիւն:

Նախասենեակում նա, առանց որ և է պատճառի, գուաց սպասաւորի վրայ, որ մօտենում էր նրա վերարկուն հանելու:

Նա մտաւ ուղիղ հիւրասենեակ: Ովսաննան Լիգուկայի և Ելեկայի հետ պարապում էր:

— Ի՞նչ էք անում այստեղ, չէք կարող ձեր սենեակում խաղալ: Ովսաննան վիրաւորած ոտքի կանգնեց: Մանկահասակ քոյրերը ապշած նայեցին իրանց հօրը, որին հազիւ թէ երբ և է այդպէս չարացած տեսած լինէին:

— Ո՞ւր է ձեր մայրը, — գոչեց ծերունին:

Ելեկան, ցուցամատը բերանին դրած, միւս ձեռը մեկնեց դէպի աջ:

Պետր Սոլոմոնիչը անյապաղ անցաւ կից սենեակը: Տիկինը սովորական զբօսանքից նոր վերադարձել էր և հազուատը փոխում էր: Լսելով ամուսնու քայլերի ձայնը, նա ուզեց ջանդիմանել, որ առանց նախազգուշացնելու համարձակում էր ներս մտնել: Նա հետևում էր արիստոկրատ տիկիներին օրինակին, մարդուն թոյլ չէր տալիս շատ էլ համարձակ վարւել, այսինքն ուզած ժամանակը մտնել նրա սենեակը: Բայց երբ նայեց նրա այլայլած դէմքին, ապշեց: Նրա ձեռները մնացին կրծքի կոճակների վրայ:

Պետր Սոլոմոնիչը կանգնեց նրա դէմ ու դէմ, նայեց նրան ոտից մինչև գլուխ և դառն ծիծաղով արտասանեց.

— Գեղեցկուհին, ինչպէս երևում է, նոր է տուն վերադարձել:

— Ի՞նչ է պատահել, Պետեա:

«Պետեա» կամ «Պետկա» նա կոչում էր ծերունի Պետրոսին այն ժամանակ, երբ փաղաքշանքով խօսելու կարիք էր լինում:

— Ինչ է պատահել... Ասուած ինձ բաղդաւորեցրել է:

— Ես չեմ հասկանում:

—Օօ՛ճ, դու շատ լաւ ես հասկանում,—մենչեց Պետր Սոլոմոնիչը, ատամները չարաչար կրճտելով:

—Խելագարուել ես, ի՛նչ է:

—Ի հարկէ, խելագարուել եմ, ծերացել եմ, այստեղս դրուստ չէ, մաղերս-բամբակ, ինքս-ոչժից ընկած, թուլացած, տգեղացած, խակ դու, դու, դու...

Նա շնչասպառ մի քայլ առաջ դրեց: Նա դողում էր ոտից մինչև գլուխ: Նա խօսք չէր գտնում սրտի կատաղութիւնը միանգամից արտաչափելու: Տիկիինը, ուսերը թօթուելով, կրկնեց, թէ ոչինչ և ոչինչ չէ հասկանում և շարունակեց կրծքի կոճակները կապել: Բացց նա մասամբ կեղծում էր: Եթէ ամեն բան չէր հասկացել, զոնէ զուշակում էր դործի հուլթիւնը: Նա զգաց, որ կատակի ժամանակ չէ, որ, վերջապէս, սկսում է վաղուց սպասուած փոթորիկը:

Միայն նա կամենում էր ժամանակ որսալ, ուշ ու միտքը ժոշովել, պաշտպանելու փաստեր և միջոցներ գտնել: Այն ինչ՝ Պետր Սոլոմոնիչը, բռունցքները սեղմած, մի քայլ ևս առաջ դրեց և խեղդուած ձայնով գոռաց.

—Անամօթ, խաբեբայ:

Տիկիինը յետ ու յետ քաշեց, նայեց նրան ոտից մինչև գլուխ, ցոյց տալով միաժամանակ և՛ զարմանք, և՛ բարկութիւն, և՛ վիրաւորանք, և՛ արհամարհանք: Թւում էր, որ նա խօսք չէ գտնում պատասխանելու ամուսնու չը տեսնուած, չը լուած, կոշտ, կոպիտ և վայրենի խօսքերին:

Փոթորիկի առաջին պտոյտը անցել էր: Ամենաճանր խօսքը արտասանել էր: Պետր Սոլոմոնիչը բռունցքները բաց արեց և շարունակեց մի քիչ հանդարտ եղանակով: Նա ասաց, թէ զիտէ իւր կնոջ նմանների սովորութիւնը: Այն, տիկիինը կը զարմանայ կեղծ կերպով, կը գոռայ, լաց էլ կը լինի, կերպի էլ, բացց նրա համար միւսնոյնն է, ձշմարիտ է թէ սուտ, անում է տիկիինը թէ չէ, բաւական է, որ մարդիկ խօսում են, բաւական է, որ Պետր Սոլոմոնիչը լսում է:

—Ախար ի՛նչ ես լսում, ի՛նչ:

—Ձը զիտես համ, խեղճ, ողորմելի, անմեղ կնիկ:

—Ո՞վ է խօսում, ի՞նչ են խօսում, ասա էլի, ասա, որ ես էլ իմանամ:

—Ինձ համար միևնոյնն է, ով որ էլ խօսի... Տէր Ասուած, Տէր Ասուած, այն էլ... հաս, հիմայ եմ հասկանում, թէ ինչու սիրոս չէր կպչում, ինչո՞ւ ատում էի...

Այստեղ տիկինը հասկացաւ մնացեալը, որ դեռ նրա համար կասկածելի էր: Բայց նա արդէն ուշքի էր եկել և իշխում էր իրան լիովին: Այժմ եթէ Պետր Սոլոմոնիչը մարմնացած վրէժ դառնար, դարձեալ չէր կարող սոսկալի լինել նրա համար:

Անշարժ, անվրդով նա կանգնած էր մարդու առջև և խրոխտ կերպով նայում էր մերթ նրա նորից սեղմած բռունցքներին, մերթ կատաղի աչքերին:

—Ձարմանում եմ,—արտասանեց նա հանդարտ եղանակով, մինչև անգամ քմծիծաղ տալով,—զարմանում եմ, որ չէք խիտմ: Խփեցէք էլի, ինչո՞ւ էք սպասում, ես սլատրաստ եմ ամեն տեսակ վիրաւորանք ստանալ: Վերջացրէք, քանի որ սկսել էք, ես սպասում եմ:

—Ուրեմն ձշմարիտ է, ասա, անպատկառ, ձշմարիտ է:

Տիկինը խորին յանդիմանութեամբ և զգւածքով գլուխը երեւեց: Ապա յանկարծ նրա դէմքը ընդունեց հսկարտ արտայայտութիւն: Նա յօնքերը վեր քաշեց, գլուխը բարձրացրեց և, ուսի վրայով ծուռ նայելով մարդու երեսին, ասաց՝ եթէ նա կը շարունակի այնպէս մոռանալ ինքն իրան, եթէ մարդավարի չի խօսիլ, այս բոպէին դուրս կը գնայ և այլ ևս չի վերադառնալ:

—Գնա, գնա էլի, կորիր այնպէս, որ փոշիւ էլ չը մնայ իմ տանը:

Տիկինը բարձրաձայն ծիծաղեց: Ի՞նչ զւարճալի բան, նրան արտաքսում է մարդը. շատ լաւ, շատ գեղեցիկ, նա կը գնայ, իսկոյն, հէնց այս բոպէիս: Բայց հասարակութեան առաջ նրա պատուի մասին պատասխանատու կը լինի Պետր Սոլոմոնիչը: Ուրեմն տէրը նրա հետ:

Եւ տիկինը մի քանի քայլ արեց դէպի դռները, խրոխտ, հաստատ և անշեղ քայլեր:

Առանց մի վայրկեան մտածելու՝ Պետր Սոլոմոնիչը կարծեց,

Թէ նա կարող է գնալ, կը գնայ և, իրաւ, երբէք չի գալ, նա իւր ճակատը շփեց և, ծանր հառաչելով, նայեց նրա ետեւից,

—Կնց,—ասաց նա յանկարծ,—կնց, ասելիքս ասեմ, յետոյ գնա-ուր որ ուզում ես, Կանգնիր, ասում եմ, կարող է պատահել, որ ես... այո, ինչ գիտեմ, խելքս կորցրել եմ...

Տիկինը, ձեռը դրան բանալիի վրայ դնելով, կանգ առաւ և հպարտութեամբ նայեց նրան:

—Ես պահանջում եմ, որ դու բացադուրթիւն տաս հէնց այս րոպէիս,—շարունակեց Պետր Սոլումնիչը:

—Ես պահանջներ չեմ կատարում:

Նա առաջ եկաւ և սկսեց ինչ-որ որոնել իւր տուալէտի սեղանի վրայ, շարունակելով.

«Պահանջում եմ, կարծես, ես ստրուկ եմ կամ աղա- լիինս Դուք միայն կարող էք խնդրել, այն էլ խաղաղ կերպով, մար- դավարի կը պատասխանեմ, ինչու չէ, ես պատասխանելուց չեմ վախենում, ես մեղք չունեմ, որ վախենամ:

Նա դտաւ մի արկղիկ և սկսեց արագ արագ մատներով խառ- նել նրա մէջ, միևնոյն ժամանակ, շունչը կտրւած արտասանելով.

—Ներս է մտնում և գծի պէս զոռում. եթէ ես մի վախկոտ կնիկ լինէի, պէտք է տեղն ու տեղը սարսափից մեռնէի:

—Իսկ եթէ իմ տեղը մի ուրիշը լինէր, նա, առանց զոռալու, քեզ տեղն ու տեղը կը սպանէր, որովհետեւ...

—Պետր Սոլումնիչը մի վայրկեան կանգ առաւ: Տիկինը նրա փոխարէն շարունակեց.

—Որովհետեւ ես խաբէրայ եմ, չէ, անամօթ եմ, անպատկառ, այնպէս չէ: Դուք ասում էք թէ խօսում են. ինչ են խօսում... Ինձ բամբասում են, այնպէս չէ, այսինքն, — պարզ խօսիր էլի, ինչո՞ւ ես թագցնում, — ասում են, որ ես լաւ կնիկ չեմ, հաւատարիմ չեմ: Գա ինձ համար նորութիւն չէ: Մի զարմանաք, մի՛ վեր թռչէք, հանգիստ նստեցէք ու լսեցէք:

Եւ տիկինը շարունակեց հանդարտ հոգով, սառն կերպով, դրա- մաբանօրէն «բացադրել»: Այո, մարդկանց բամբասանքը նոր բան չէ նրա համար: Բայց ինչ է կարծում Պետր Սոլումնիչը, չը պիտի խօսեն, չը պիտի բամբասեն: Ո՛չ, ընդհակառակը զարմանալի

կը լինէր, եթէ չը բամբասէին: Թող լաւ մտածի Պետր Սոլոմոնիչը և կը տեսնի, որ աշխարհի երեսին ոչ մի կնոջ այնքան լաւ չէ սազում զրպարտութիւնը, որքան նրա կնոջը: Ուրիշ բանի մասին չէ ասում տիկինը, կարելի է Պետր Սոլոմոնիչը շատ խելօք է, շատ կրթւած է: Բայց տարիքը, Տէր Աստուած, տարիքը: Ինչու է Պետր Սոլոմոնիչը վրդովւում, խօսմ նրա ձերութիւնը թաղցնելու բան չէ, ինչպէս և թաղցնելու բան չէ նրա կնոջ երիտասարդութիւնը և գեղեցկութիւնը: Ինչ կը մտածի Պետր Սոլոմոնիչը, եթէ ինքը մի այդպիսի զոյգ տեսնի մի տեղ: Նա իսկոյն կ'ասի. «Երևի, հայր ու աղջիկ են: Իսկ եթէ իմանայ, որ մարդու կնիկ են, կ'ասի. «Տնողները խեղճ աղջկան փողի համար ծախել են այդ պառաւին: Հիմայ, բան է, մի օր մի հանդիսում, թատրոնում կամ հէնց փողոցում Պետր Սոլոմոնիչը այդ պառաւ մարդու ջահել կնկան տեսնի մի երիտասարդի հետ, չի մտածիլ, թէ կնիկը անխիղճ է, նա ողորմելի ձերունուն դաւաճանում է:

— Զէքը ասել, օօօ, այնպէս կ'ասէիք, որ... Դա հերիք չէ, Դուք այն ժամանակ էլ կը բամբասէիք, եթէ այդ պառաւ մարդու ջահիլ կնոջը տեսնէիք իւր ամենամօտիկ ջահիլ, գեղեցիկ, կըրթւած, խելօք, սրախօս ազգականի հետ...

Պետր Սոլոմոնիչը մի զօրեղ շարժում դործեց և հառաչեց: Բայց կնոջ խօսքը չընդհատեց: Տիկինը շարունակեց.

— Կրկնում եմ, եթէ այդ ամենամօտիկ ազգականի հետ էլ տեսնէիք, կասէիք. «միմեանց սիրում են» կամ, էհ, մի ուրիշ, աւելի վատ բան: Եր խիղճը ձեզ չէր տանջիլ, որովհետև դուք ինչ գիտէք այդ պառաւ մարդու ջահիլ կնոջ սիրուր: Ինչ գիտէք, որ նա ոչ միայն չէ խաբում իւր պառաւ, ոչ ժից ընկած, սպիտակած, մէջքից կռացած, ատամները թափւած մարդուն, այլ մինչև անգամ մտքում ծաղրում էլ է բոլոր երիտասարդներին: Ինչ գիտէք, որ այդ ջահիլ, գեղեցիկ կինը միայն մէկին է պատկանում աշխարհի երեսին, այսինքն իւր զաւակների հօրը, իւր օրինաւոր ամուսնուն: Վայ մեզ, վայ մեզ, վայ խեղճ կանանցս, մեր դրութիւնը հա այսպէս է: Մարդիկ մեզ պրիւնցիպն երից զուրկ են համարում: Կարծում են, որ մենք երեխաներ ենք, եթէ մեր առաջ կարմրացրած երկաթ սպանն, կ'ասենք ոսկի է, կը վերցնենք: Զեն մտա-

ծում, որ մենք հասկանում ենք, թէ երկաթը մեր ձեռքը կ'այցրի, մեր գեղեցիկ մարմնի վրայ կը դնի մի վէրք, մի արատ, որ ոչինչով, ոչինչով չէ կարելի մաքրել: Յոյս ունեմ, որ դուք իմ ասածը հասկացաք, ուրիշ ասելիք չունեմ, մնացեալը դուք գիտէք...

Որքան այդ վայրկեանին նա Պետր Սոլոմոնիչի աչքում գեղեցիկ էր, որքան խելօք և հրապուրիչ: Բայց և որքան Պետր Սոլոմոնիչը ինքը իւր աչքում ծեր էր, զառամեալ և անարժան այդ գրաւիչ արարածին:

— Կնոջ, — ասաց նա, տեսնելով, որ կինը, խօսքը աւարտելուց չետոյ, ուղում է դուրս գնալ:

Ի՞նչ, կանգնի, որ նա հայհոյի, գոռաց, «կինուօջի պէս» ձեռք բարձրացնի նրա վրայ: Ոչ, ոչ, տիկինը վճռել է և պէտք է գնայ:

Պետր Սոլոմոնիչը մօտեցաւ նրան մի քանի քայլ, կանգնեց նրա առաջ, նայեց աչքերին: Օ՛, եթէ Աննայի ասածների կէսը, կէսի կէսը ճշմարիտ է, այն ժամանակ անիծւեն չար լեզուները, որ բամբասում են: Միթէ Պետր Սոլոմոնիչը կարող էր հաւատալ, եթէ ուրիշներից լսած չը լինէր: Սովորական ժամին նա մտաւ կլուբ: Նա կամենում էր մի քիչ թղթախաղ խաղալ: Նա պարտնեօրն էր էր փնտռում, յանկարծ նրա ականջին հասաւ իւր անունը: Նա կանգ առաւ դռների մօտ: Կանանչ սեղաններից մէկի շուրջը նստած էին չորս շարամիտներ և խօսում էին: Խօսում էին նրա մասին այն ամենը, ինչ—որ կարելի է խօսել մի պարտաւոր մարդու անունը աղբի մէջ թաղելու համար: Նա ականջները փակեց և հեռացաւ: Չար կասկածը նրա արիւնը տակն ու վրայ արեց: Նա ամօթից չը կարողացաւ կլուբում երկար մնալ և շտապեց տուն, խելքը կորցրած, աչքերը արիւն կոխած:

— Ես ձեզ չեմ մեղադրում, — արտասանեց տիկինը, նրա բացադուլութիւնը լսելուց չետոյ, — դուք միամիտ մարդ էք, ձեզ ամեն մի երեխայ կարող էր խաբել: Ախ, Տէր Աստուած, Տէր Աստուած, ես խաբեբանջ, ես անամճթ, ես անպատկան, ես զաւաճան...

Նա սկսեց բարձրաձայն հեկեկալ: Պետր Սոլոմոնիչը շտապեց ներողութիւն խնդրել: Նա ծեր է, միամիտ է, նրան խելքից հանեցին, բայց նա այժմ չէ հաւատում, և չի հաւատալ եթէ ամբողջ աշխարհն էլ խօսի:

— Հեռու հնձանից, — գուցեց տիկինը, ձեռով հրելով նրան, — ես ձեր վիրաւորանքի պատճառով չեմ լաց լինում, արդար մարդը ոչ մի զրպարտութիւնից չէ վիրաւորւում, ես իմ բաղնիք եմ ողբում...

Դռների միջից ներս ցցեցին երկու գանգրահեր փոքրիկ գլուխներ, Լիզոչկան և Ելեչկան վախեցած դէմքերով նայում էին իրանց բարձրաձայն արտասուող մօրը:

Տիկինը արագութեամբ աչքերը սրբեց և մտեցաւ նրանց, գոչելով.

«Անբաղդ երեխաներ, ինչ կրթութիւն կարող էք ստանալ այս տանը...»

V

Ամառը սկսել էր Դիմաքսեանը դպրոցում գործ չունէր: Տնային պարապմունքը թէև առաջւայ պէս չէր եռում նրա ձեռքի տակ, բայց այժմ աշխատելու ցանկութիւն ունէր: Նրա գլխում յղանում էին նորանոր գաղափարներ, նրա եռանդուն միտքը հանգիստ չունէր: Դիտելով հասարակական կեանքի բազմատեսակ վատ երևոյթները, նա օր օրի վրայ համոզւում էր, որ բոլոր այդ երևոյթների հիմնական պատճառը մի բան է — անհատի բարոյական աշխարհի սղութիւնը: Նա ասում էր, թէ ոչ մի հասարակութիւն չի կարող առաջադիմութիւն անել, եթէ նրա մէջ չը կան բարոյապէս զօրեղ անձինք:

«Բարձրացրէք անհատին, — կրկնում էր նա — կը բարձրանայ և շրջանը: Ոչ մի բարեփոխութիւն չէ կարող հիմք գտնել, եթէ նա չունէ ապահով պատնէշներ: Այդ պատնէշներն են առանձին անձնաւորութիւնները, զինւած մտաւոր և բարոյական ոյժերով: Հասարակութիւնը կարող է մի որ և է վերանորոգութեան համար պատրաստի հող չունենալ: Անհատները կարող են այդ վերանորոգութիւնը իրանց ուսերի վրայ պահել, մինչև որ նրանք ամուր պատուանդան կը պատրաստեն:

Նրա խորին համոզմունքով լոկ դիտութիւնը դեռ բաւական չէր՝ մարդկանց հասարակական ուղեցոյց ջահեր դարձնելու համար: Անկեղծ հաւատ դէպի քաղաքակիրթ ապագան, խորին յոյս որ և

է ձեռնարկած գործի յաջողութեան վրայ և անդրդուելի կամք—
 ահա այն պայմանները, որ նա պահանջում էր ամեն մէկից, որ
 ձգտում էր ուրիշներին օգտակէտ լինել:

Եթէ դու ուզում ես ծառայել մի գործի—առաջ ինքդ պար-
 տաւոր ես կուրօրէն հաւատալ այդ գործի ճշմարտութեանը: Եթէ
 դու յոյս չունես քո ոչժերի վրայ—մի՛ դուրս գալ ասպարէզ: Եթէ
 դու կամք չունես—մի՛ կարծիլ, թէ մազու չափ կարող ես ուրիշի
 կամքի վրայ ազդել:

Այս էր նրա նշանաբանը, և այս էր նա քարոզում թէ զըր-
 չով և թէ բերանացի: Եւ նրա խօսքերը ասպարդիւն չէին անցնում:
 Նրա յորդորանքով կազմոււմ էր մի ընկերութիւն, որի նպատակը
 պէտք է լինէր տարածել եւրոպական գիտութեան տարրերը ժողո-
 վուրդի բոլոր խաւերի մէջ: Նա այժմ շրջապատւած էր բաւակա-
 նաչափ բարեկամներով, որոնց նա միշտ, ինչպէս յարատե խթան,
 զրդում էր գործել: Աւելի մեծ խրախոյս էր այդ բարեկամների
 համար նրա անձնական օրինակը: Նա այդ տեսնում էր և զգում:
 Ահա ինչու, չը նայելով յոգնածութեանը, նա գործում էր անդա-
 դար: Նա արդէն վերջացրել էր անցեալ տարի սկսած իւր գրաւոր
 այն մեծ աշխատութիւնը, որ պէտք է պարզէր նրա գաղափար-
 ների ամբողջ աշխարհը: Նա բաց չէր թողնում ոչ մի ընկերական
 ժողով, ոչ մի գործ, ուր հարկաւոր էր նրա օգնութիւնը կամ
 խորհուրդը:

Գպրոցի շրջանաւարաններին նա տւեց մի համառօտ ծրագիր,
 որով և նրանք պէտք է գործէին իրանց շրջաններում, ուր որ լի-
 նեն նրանք—գիւղում թէ քաղաքում և ինչ պաշտօն ևս ունե-
 նան—ուսուցչական թէ քահանայական: Նրա միտքը միշտ զրադ-
 ւած էր լուրջ խնդիրներով: Նրա գլուխը գործում էր անընդհատ,
 ինչպէս մի լարւած մեքենայ: Եւ այդ մեքենան երբէք չէր յոգնում,
 երբէք չէր ձանձրանում: Յոգնում էին միայն այդ մարդու ջղերը,
 յոգնում էր նա ֆիզիքայէս և ոչ բարոյայէս:

Մի առաւօտ նա իւր սովորական առանձնակի զբօսանքից
 տուն էր վերադառնում: Մի քայէլեան ծառազարդ փողոցի վրայ նա
 հանդիպեց Մսերեանին և բժիշկ Սալամբէկեանին: Նրանք զայլիս էին
 դէմ ու դէմ մի անծանօթ օրիորդի հետ:

—Լաւ պատահեցինք,—գոչեց Մսերեանը, բռնելով Դիմաքսեանի թւից,—կնց: Խնդրեմ, ծանօթացէք. օրիորդ Կարինեան, Դիմաքսեան—իմ ամենաթանգագին ընկերը:

Իդէպիստը ստիպեց նրան յետ դառնալ:

—Այս րոպէիս հէնց քո մասին էինք խօսում: Օրիորդին հարկաւոր են մի քանի տեղեկութիւններ, որ քեզանից լաւ ոչ ոք չը գիտէ: Խօսեցէք...

Նա, բժիշկ Սալամբէկեանի հետ յետ կանգնելով, օրիորդին թողեց առջ Դիմաքսեանի հետ: Յայտնւեց, որ Կարինեանը մի մասնաւոր վարժուհի է, պատրաստուած է գնալ արտասահման՝ գործնական մանկավարժութիւն սովորելու, որպէս զի յետոյ Քիֆլիզում մանկական պարտէզ բաց անի: Նա միայն կամենում էր իմանալ՝ ո՞ւր աւելի նպատակաշարմար է գնալ:

Դիմաքսեանը հաղորդեց օրիորդին անհրաժեշտ տեղեկութիւններ, իւր կողմից աւելացնելով մի քանի խորհուրդներ: Օրիորդը լսում էր նրան ուշադիր և մինչև անգամ ակնյայտ ակնածութեամբ:

Իսկ մի գունատ արարած էր, նիհար, սակաւ ինչ լծուխ դէմքով, խելացի և արտայայտիչ գծերով: Ընդհանրապէս նա ոչ միայն սիրուն չէր, այլ և կարող էր տղեղ համարուել, եթէ չունենար իւր ձայնի և աչքերի մէջ անչափ եռանդի և տոկոնութեան հետ մի տեսակ հեղ անուշութիւն: Նա խօսում էր դրական եղանակով, համոզւած մարդու պէս, նրա շարժւածքները ազատ էին, բաց, միևնոյն ժամանակ, ամօթխածութեամբ լի:

Նա Դիմաքսեանի վրայ լաւ տպաւորութիւն դործեց:

—Վերջացրիք,— ասաց Մսերեանը, որ ամբողջ ժամանակ աչքը չէր հեռացնում օրիորդից,—ուրեմն մենք այժմ կարող ենք միասին խօսակցել:

Նա մօտեցաւ օրիորդին և սկսեց նրա հետ քայլել, բժշկին թողնելով յետ: Այս հանգամանքը բաւական զարմացրեց Դիմաքսեանին: Առաջին անգամն էր նա տեսնում Մսերեանին այդքան ուշադիր դէպի մի կին:

Բժիշկ Սալամբէկեանը Դիմաքսեանին հաղորդեց, որ իրան մի նոր պաշտօն են առաջարկում և առաջարկոյն է Բարաթեանը:

Քաղաքը նոր հիւանդանոց է բաց անում, հարկաւոր է մի բժիշկ-դիրեկտոր: Բարաթեանը խոստանում է իւր բարեկամների հետ միասին ամեն ձիգ դործ դնել, որ Սալամբէկեանը ընտրւի:

— Տեսնում ես, մարդը այնքան առաջ է գնացել, որ իւր ընկերներին էլ հովանաւորութիւն է ցոյց տալիս: Բայց ես չեմ ուզում այդ հովանաւորութիւնը:

— Ինչո՞ւ:

— Նրա համար, որ չեմ ուզում ոչ մի բանով պարտական լինել այդ մարդուն:

— Պատճառը:

— Նրա երգը վերջացած է, նա ուխտագրուած է, դադարի դաւաճան:

Կիմաքսեանը զգուշացրեց, թէ անյարմար է մի օտար օրիորդի մօտ այդ բանի մասին խօսելը: Բժիշկը, իւր քայքերը ծանրացնելով, պատասխանեց, թէ օրիորդը շատ լաւ է ճանաչում Բարաթեանին և թէ նրանք այժմ մինչև անգամ ազգականներ են:

— Օ՛, ինչպէս փոխուում են մարդիկ,— շարունակեց նա վրդովւած,— երկու տարի էլ կաջ և արդէն... չլի՛՛՛՛՛, ոչինչ էլ մնացել անցեալից, շողիացել է...

Այն մարդիկ, որոնց դէմ Բարաթեանը պէտք է մաքաւէր, այժմ նրա բարեկամներն են դառնել: Նա մտերմաբար սեղմում է երէկւայ կանտրաբան տի ստի կամ վաշխառւի ձեռը: Նա թէև թեւի տւած ման է զալիս խաբբայ կապալառուի հետ, որովհետև մտադիր է ընկերանալ նրան: Այժմ նա ուզում է կապալներ վերցնել նոր կառուցւող երկաթուղու վրայ:

Բժիշկը ստիպւած եղաւ խօսքը ընդհատել, երբ օրիորդը և Մսերեանը, փողոցի ծայրին հասնելով, յետ դարձան: Մսերեանը ոգևորւած մի ինչ-որ պատմութիւն էր անում օրիորդի համար, և առհասարակ շատ էր զբաղւած նրանով:

Փողոցի կիսում օրիորդը ցտեսութիւն ասաց, խնդրելով ամենքին մի օր շնորհ բերել իւր տանը:

— Նս ապրում եմ մեծ մօրս և հօրաքրոջս հետ: Դեռ մի ամիս այստեղ եմ, շատ ուրախ կը լինեմ եթէ գաք:

Բժիշկը գնաց նրան ուղեկցելու:

—Ո՞վ է այդ օրիորդը,—հարցրեց Գիմաքսեանը Մսերեանից։

—Սալամբէկեանի մի մեռած ընկերոջ քույրն է։ Հաւանեցիր։ Գիտես, որ ես կանանց առհասարակ չեմ սիրում, բայց այս մէկը ինձ դուր է գալիս։ Արի մի օր միասին այցելենք նրան։

Գիմաքսեանը խօսք տւեց և մի շարաթ անցած գնաց նրա հետ օրիորդի մօտ։

Կարինեանը բնակուում էր գետի ափում գտնուող միջարկանի մի տան մէջ, որ բաւական բանաստեղծական զիրք ունէր։ Տան առջև տարածուած էր մի ընդարձակ այգի, որ վերջանում էր գետափին։ Բակի վիթխարի ընկուզենիի տակ նստած էր մի զառամեալ պառաւ, շրջապատուած անթիւ հաւերով։ Նա, գարիի հատիկները ցրելով խօսում էր հաւերի հետ, յանդիմանելով նրանց ազահութեան համար։ Դա Կարինեանի տատն էր։

Օրիորդը հիւրերին ընդունեց քաղաքավարի և պարզ կերպով։ Նրա հօրաքոյրը տանը չէր, իսկ ինքը, կարի մեքենան առաջը դրած, պատշգամբի վրայ իւր համար հազուստ էր կարում։

Երեք սերունդների ներկայացուցիչները միասին ապրելով, յաճախ հայեացքների տարբերութիւնից իրարու հետ ընդհարումներ էին ունենում։ Այս պատճառով օրիորդի կեանքը միխթարական չէր այդ շրջանում։ Տատը հաշտուել անգամ չէր ուզում այն մտքի հետ, թէ պէտք է իւր թոռնը, մենակ աղջիկ, ինքնագլուխ գնաց ով գիտէ ինչ երկիրներ։ Նոյն մտքի էր և նրա հօրաքոյրը, որ իւր կողմից աւելի էր գրգռում պառաւին օրիորդի դէմ։

Այս բոլորը պատմեց ինքը օրիորդը, անկեղծաբար, առանց իւր դրութիւնից քաշելու։

—Բայց ի՞նչ էլ լինի, նրանք արդէն համաձայնուել են իմ գնալուս, թէև ամեն օր տրտնջում են։

Գիմաքսեանին դուր եկաւ օրիորդի հաստատակամութիւնը։ Ահա, վերջապէս, մի հայ կին, որ ինքնուրոյն է և չէ խոնարհուում կամակոր հնութեան առաջ։ Նա գովեց օրիորդի նպատակը։

—Թողէք հներին, աշխատեցէք նորերի համար։ Շատ անգամ մեռնող սերունդը իւր եսին ուզում է զոհել յաջորդի երջանկութիւնը։ Եթէ մենք նրա ամեն քմահաճութիւններին սանտիմենտալ կերպով հպատակենք, ոչինչ առաջադիմութիւն չեն կարող

անելի Յիշեցէք, թէ ձեր ձեռնարկութիւնը որքան օգուտ պէտք է տայ ապագայ սերնդին, և դուք կը տեսնէք, որ անարդար կը լինէր այդ գեղեցիկ նպատակը զոհել պառաւանդին:

Բայց պառաւը ընկուզենիի տակ հաւերի հետ նիստ կազմած տասն էր: Իսկ միւսը, օրիորդի հօրաքոյրը, եթէ պառաւ ածականը լսէր, առանց այլ և այլի պէտք է արտաքսէր Դիմաքսեանին: Ահա նա, այրի Մելանիա Բօլումբաշեանը, սանդխտով վեր է բարձրանում: Իսկապէս նրա քառասնեակը վաղուց արդէն անցել է, բայց ով կարող է նրան երեսներկու տարեկանից աւելի համարել:

Այրին համարձակ քայլերով մօտեցաւ և թօթեց Մսերեանի ձեռը: Նրանք արդէն ծանօթ էին:

Նա հագնւած էր ժամանակի մօդայով: Ամեն բան նրա վրայ եւրոպական էր, բացի թասակրաւից: Նա գլխարկ չէր հագնում, քաջ համոզւած լինելով, որ վիրական դիւակապը աւելի է սազ գալիս իւր կոլորիկ կարմրախաչոտ երեսին: Նա խօսում էր ռուսերէն, արագ-արագ, արհամարհելով քերականական բոլոր կանոնները: Եւ խօսում էր մեծ մասամբ Մսերեանի հետ, որի երեսին շուտ շուտ ժպտում էր, ծիծաղում: Զգալի էր, որ ողբացեալ այրին չէր հրաժարել ամուսնութեան դառն լուծը երկրորդ անգամ քաղցրութեամբ շանձն առնելուց, և թէ Մսերեանը բարեհաճէր ուշադիր լինել դէպի նա: Սակայն իդէալիստը այրիի մասին այնքան էր մտածում, որքան և՛ իւր հազուստի մասին: Իսկ նրա հազուստը այսօր մի առանձին բանաստեղծական անկարգութեան մէջ էր: Մշտած և տրորւած սև սիւրտուկի կուրծքը փայլում էր սափրավիրի սրոցի պէս, իսկ ձմեռային գունատ վարտիկը վաղուց արդէն զրաւել էր փողոցային հնավաճառների ուշադրութիւնը: Աւելի ողբալի էր նրա հին ձևի շաբիկը, որի օձիքը ճմլւել էր և կպել նրա կոկորդին եախուի պէս: Այն ինչ՝ սև փողկապը թուել էր վզին և այնտեղ նստել երկշոտ ծիծեռնակի նման:

Նա այրիի բարբաջանքին պատասխանում էր «այո՛», «ինչպէս չէ», «ցը ցը ցը» և այլն հնչիւններով, իսկ ուշը օրիորդի կողմէն էր: Վերջապէս, շաղակրատ տիկնոջից ձանձրացրած, նա ցըտեսութիւն սասց և ընկերոջ հետ դուրս եկաւ:

— Հը՞մ, հաւանում ես, — դարձեալ հարցրեց նա Դիմաքսեանից:

—Որի՛ն:

—Ի հարկէ, օրիորդին, միւսը թի՛ն հօրս ցաւն է:

—Ի՛նչ ասեմ...:

—Յղբայր պատւական, ես հիացած եմ, իսկ և իսկ եռանդուն և տոկուն հայտնու տիպարն է, միայն տաշած, լղկած, հասկանում ես:

—Ելի ոգևորւեցիր:

—Ի՞նչպէս չ'ոգևորւեմ, նորոգիչներից է, հասկանում ես...

Այդ օրից յետոյ Գիմաքսեանը Մսերեանի հետ մի քանի անգամ էլ այցելեց Վարինեանին: Ժամերով նա խօսում էր ու վիճում օրիորդի հետ և հաճոյք էր զգում, տեսնելով, որ նա հասկանում է իրան, ունէ զարգացում և հազիւ է նեղն ընկնում լուրջ խօսակցութեան ժամանակ: Նա չէր քաշուում օրիորդի մօտ, չէր կաշկանդուում այնպէս ինչպէս Գայիանէի առջև: Նրա մէջ չէր շարժում օձը, սիրտը հանգիստ էր: Սակայն ինչ և լինէր, որքան ևս Վարինեանը համակրելի լինէր, երբէք և վաչրիկան անգամ չէր մոռացնել տալիս նրան այն միւսին, որի պատկերը այնքան ամուր և այնքան որոշ դրոշմել էր նրա սրտի մէջ: Վանդնած էր զիշեր ցերէկ այդ պատկերը նրա աչքի առջև, ինչպէս նրա անաջող բաղդի ուրւականը և մենութեան մէջ միշտ նրան պատմաւում էր այն ծանր թախիծը, որ, կարծես, յաւիտեան տիրել էր նրա հոգուն...

VI

Յուլիսի վերջին Գիմաքսեանը ուղևորեց Անդրկովկասի մի մասում ճանապարհորդելու: Նա կամենում էր մօտիկից ծանօթանալ ժողովրդի բարոյական կացութեան հետ: Բայց ժամանակը շատ էլ չէր ներում. մի ամիս մի քանի տեղեր այցելելուց յետոյ, նա թարմացած վերադարձաւ և եռանդով անձնատուր եղաւ իւր զբաղմունքներին:

Կարոցի մէջ բարձրացրել էին նոր աղմուկներ: Շուտով պէտք է ընտրւէին նոր հոգաբարձուներ: Գիմաքսեանի հակառակորդները սկսել էին ծածուկ զործել: Նրանք մտադիր էին նրա կողմնակից հոգաբարձուներին սևացնել և փոխարէնը ուրիշներին ընտրել:

Նախագահը, որ նրանց աջակիցն էր, զաղանի հրահանգ էր տւել ծխական քահանաներին: Պատւիրւած էր եկեղեցական ընտրութիւնների ժամանակ առաջ գցել այնպիսիներին, որ պէտք է նախագահի ուզած մարդկանց քւէ տային:

Հակառակ կուսակցութիւնը հասկացել էր բանի էութիւնը և բացարձակ յարձակում էր նախագահի վրայ:

Երկու բանակների մէջ սկսւել էր մի ծայրացեղ բանակուիւ, որի արտայայտիչներն էին երկու միմեանց թշնամի լրագիրներ: Ոչ մէկը չէր խնայում միւսին. երկու կողմից էլ լսում էին ծանր մեղադրանքներ, ծաղր, հայհոյանք, նոյն իսկ զրպարտութիւններ:

Գիմաքսեանը սկզբում կամեցաւ հեռու պահել իրան այդ կուից: Սակայն չը կարողացաւ: Նորից նրա արիւնը բորբոքւեց, աչքերը վառւեցին, և յարձակւեց ասպարէզ, ինչպէս պատերազմի ծարաւ մի քաջ զինուոր: Նա մոռացաւ դպրոցը, նա չէր հոգում մի վայրկեան անգամ իւր մասին, մտքովը անգամ չէր անցնում, թէ կարող է զրկւել պաշտօնից, եթէ չաղթուիւնը թշնամիները տանեն:

Նրա դէմ տասպարէզ էր դուրս եկել և՛ Վէքիլեանը, այս անգամ իւր իսկական անունով և ազգանունով:

«Փաստեր, փաստեր», կրկնում էր փաստաբանը, մոռանալով, որ ինքը ոչինչ փաստեր չէ տալիս հակառակորդին, բացի վիրաւորիչ ակնարկներից:

Մի օր Գիմաքսեանը դարձեալ իւր մասին կարդաց մի Ֆելիետօն, միայն ուրիշ կեղծանունով: Այս անգամ նրա անձնականին չէին կպչում, խօսում էին նրա գործունէութեան մասին: Ֆելիետօնը դրւած էր սուր գրչով, զարդարւած ճարպիկ կալամքուրներով և շնորհալի սրախօսութիւններով:

Աւաջին անգամ Գիմաքսեանը զգաց, որ հանդիպում էր ոչ թէ մի ստոր սողոսկողի, այլ մի զօրեղ հակառակորդի, որի հետ կուելը շատ էլ դիւրին բան չէ:

Սրիւնը խփեց գլխին: Մի չարագուշակ ժպիտ աղաւաղեց նրա բերանը: Առանց երկար մտածելու, նա աղեղը լարեց դէպի այն կողմ, ուսկից զիտէր, որ գալիս են վարագուրւած հարւածները:

Ան, բաւական չէ Բարաթեանի գործով արածը, գրչով էլ է

ուզում նրա հետ մրցել: Դա առանց նպատակի չէ: Անշուշտ նա հոգաբարձու ընտրվելու միտումներ ունէ:

Այսպէս էր մտածում Դիմաքսեանը, և նա չը սխալւեց: Բարաթեանը ընտրւեց եկեղեցական պատգամաւոր: Մի քայլ արւած էր, մնում էր միւսը, և նա արդէն Դիմաքսեանի իշխանաւորն էր— հոգաբարձու:

— Կարծեմ, մենք կը յաղթենք, —ասաց մի օր Դիմաքսեանին նրա կողմնակից հոգաբարձուներին մէկը, — Ամբակում Աֆանասիեւիչը շատ է աշխատում: Երէկ լայնաթիւղ նրա մօտ ձաշի է եղել: Նրանք գործում են ձեռք ձեռքի ուսած:

Այն ժամանակ երկու հակառակորդ բանակները պաշարեցին ընտրողներին: Շատերի գոյնը արդէն որոշ էր, քաշել նրանց մի բանակից միւսը — դժւար էր: Հարկաւոր էր գրաւել չէզոքներին, և ահա սրանց վրայ յարձակւեցին երկու կողմից զիշակեր ազաւաների պէս: Գործ էին դրւում քաղցր ժպիտներ, սիրալիր բարևներ, սպառնալիքներ, խոստումներ:

— Նուկուջան Փարսադանովիչին իմ խորին յարգանքն եմ վկայում: Հը՛մ, ամսիս քսանուվեցին ընտրում ենք:

— Ընտրում ենք, ոնց չէ, ընտրում ենք:

— Նուկուջան Փարսադանովիչ, չը մոռանաք, որ մենք հին քաղքցիներ ենք, դուք մերն էք:

— Անհ, հետտի չօրնից զա՛յատիտ անիմ վուր է ՚)...

Գռիւը քանի զնում սաստկանում էր և խեղճ Նուկուջաններին այնքան քշեցին այս բանակից այն բանակ, որ ընտրութեան օրը նրանք ներկայացան միանգամայն ջարդուվշուր եղած խելքով: Պատարազի ժամանակ մի քարոզ ընտրողներին բացատրեց նրանց պարտքը եկեղեցու և ազգի առաջ, քանզի պէտք է խղճի մտօք և անաչառութեամբ տային իրանց քւէները:

Նոյնը կրկնեց և՛ ընտրութիւնների դահլիճում:

Ամբակում Աֆանասիեւիչի բանակը յաղթեց: Դիմաքսեանի կողմնակից հոգաբարձուներին չորսը սևացան: Փոխարէնը ընտրւեցին Ամբակումը, Բարաթեանը, Վէքիլեանը և մի ուրիշը սրանց բարեկամներին:

1) Ասինքն՝ այնպէս սևացնեմ որ...

Բարաթեանը անմիջապէս շտապեց տուն և ուրախ ուրախ համբուրեց իւր մի ամսական ժառանգին:

Գալիանէն նոր էր վերկացել անկողնից: Նա զուենատ էր, նիհար, անզօր: Այլ ևս անցել էին կապրիզները: Այժմ նա խաղաղ էր, հանդիստ, զոնէ արտաքուստ այդպէս էր երևում:

Ամբողջ օրը նա չէր հեռանում նորածնի օրօրանից: Համբուրում էր նրան քնքուշաբար, խօսում էր նրա հետ, հարցեր էր տալիս և ինքը նրա փոխարէն պատասխանում: Նրա աշխարհը այժմ ամփոփւած էր այդ փոքրիկ արարածի մէջ, և ուրիշ ոչ մի բան նրան չէր հետաքրքրում: Նա մոռացել էր նոյն իսկ իւր մշտական կասկածները, արիւն ու մարմին դարձած կասկածները ամուսնու վերաբերմամբ:

Տիկին Բախտամեանը երբեմն այցելում էր նրան: Երեխայի մկրտութեան օրը նա հետը բերել էր անթիւ ընծաներ: Առհասարակ նորածինը երկու տիկինների մէջ ձգել էր մի նոր բարեկամութիւն: Միայն տիկին Բախտամեանի և Բարաթեանի մէջ երևում էր մի անհասկանալի փոխադարձ սառնութիւն: Գոնէ այդպէս էին նկատում մի կողմից Գալիանէն, միւս կողմից — Պետր Սոլոմոնիչը:

Մերունին իւր կնոջ հետ այլ ևս նախանձի տեսարաններ չէր սարքում: Արդէն բաւական պատժել էր այն օրուայ իւր շտապ մեղադրանքի փոխարէն: Նա զգում էր, որ շատ կոշտ վարուեց կնոջ հետ և մոքում հայհոյում էր չար բամբասասէրներին: Սակայն, միևնոյն ժամանակ, կասկածը արմատախիլ չէր եղել նրա մէջ: Այժմ նա տանջւում էր լուռ, առանց արտայայտելու իւր սրտի մէջ բուն դրածը:

Յաճախ նա մենակ, առանձնացած իւր սենեակում, մտածում էր ամուսնական կեանքի դառնութիւնների մասին: Նա մեղադրում էր ինքն իրան: Տասը տարի էր նա միշտ նախանձում էր, միշտ կասկածում, միշտ լարւած դրութեան մէջ էր: «Միթէ այդ կեանք է. Ոչ, ոչ, տանջանք ու Աստու պատիժ է», կրկնում էր նա:

Միւս կողմից նա սիրում էր Աննային, ինչպէս մի կնիկանի, վարվառն պատանի, և ցաւում ու մորմոքում էր, որ վաղուց վաղուց կորցրել էր իւր երիտասարդութիւնը: Իրաւ, միթէ նա ինքը չը գիտէր, որ Աննայի ընկերը չէ, որ ամօթէ մինչև անգամ մի

Թառամած ծերունու մի այդպիսի թարմ կին ունենալու Բայց, էհ, ինչ արած, թող նախանձը միշտ տանջէ նրան, միշտ չարչարէ, միայն թէ Աննային նրա ձեռքից չը լսին և միայն թէ Աննան իննալի նրա ընտանեկան պատիւը:

Իսկ Աննան նրա հետ վարուում էր սառն, խօսում էր միշտ «դուք» ով, այն էլ խօսում էր այն ժամանակ, երբ անհրաժեշտութիւնը ստիպում էր: Նա գիտէր, որ իւր պաղութիւնով տանջում է ծերունուն և հէնց գիտամբ շարունակում էր, անուշադիր թողնելով նրա փաղաքշանքները, աղերսանքները և պէս պէս խոսուսները:

«Թողէք ինձ, թողէք իմ յիմարութեան պատիժը քաշեմ», կրկնում էր նա միշտ:

Իսկ յիմարութիւն նա համարում էր ծերունու հետ ամուսնանալը, մի ծերունու, որ թունաւորում էր նրա կեանքը «անտեղի կասկածներով, անտեղի զրպարտութիւններով»:

Մի օր Պետր Սոլոմոնիչը վճռեց իւր կնոջը մի սիւրպրիզ անել, որպէս զի, վերջապէս, ձեռք բերի նրա հաշտութիւնը:

— Անիշկա, երբ է ձեր ընկերութեան տարեդարձը, — հարցրեց նա:

— Ես ինչ գիտեմ երբ է, ես ձեռք եմ քաշել ընկերութիւններից էլ, մարդկանցից էլ, ես դժբաղդ կին եմ:

— Դէ լաւ, բաւական է, ես քեզ մի լաւ բան պէտք է ասեմ: Տիկինը կամեցաւ սառն լինել, բայց, միեւնոյն ժամանակ, չը կարողացաւ զսպել կանացի հետաքրքրութիւնը: Նա աչքի տակով ծուռ ծուռ նայեց ամուսնուն:

— Ուզում եմ քո անունով, — արտասանեց Պետր Սոլոմոնիչը, — քո անունով ընկերութեանը հազար բութի բաշխել, որ դու պատուաւոր անդամուհի լինես:

Սնափառ տիկնոջ համար, արդարեւ, դա մի վերին աստիճանի ախորժեքի սիւրպրիզ էր: Մինչև այդ ժամանակ կանանց ընկերութիւնը ոչ մի պատուաւոր անդամուհի չունէր, ուրեմն նա առաջինը կարող էր լինել: Բայց նա թագցրեց իւր ուրախութիւնը, ոչինչ չ'սասց և միայն հառաչեց:

Տարեդարձի օրը Պետր Սոլոմոնիչը փողերը համրեց կնոջ

առջև: Վերջապէս, Աննան թոյլ տւեց նրան, որ համբուրի իրան
և այսպիսով հաշտւեց ամուսնու հետ:

VII

Բարաթեանի և Վէքիլեանի հողաբարձու ընտրուելը, հարկաւ,
ազդեցութիւն գործեց Գիմաքսեանի վրայ: Նա զգաց, որ այժմ
նրանց հետ պէտք է ընդհարումներ ունենայ երես առ երես:

Կուլից նա չէր վախենում, չէր մտածում և՛ իւր պաշտօնի մա-
սին: Նրան անհանգստացնում էր աշակերտների դրուժիւնը և առ-
հասարակ դպրոցի վիճակը, այն դպրոցի, որ արդէն կրում էր իւր
վրայ նրա գաղափարների դրոշմը: Այսուհետև, ուրեմն, նրա չարու-
ցած ամեն մի խնդիր պէտք է հանդիպի Բարաթեանի ու Վէքի-
լեանի կամքին և յետոյ իրազորձւի կամ ոչ: Արդէն նա արհարթելի
էր համարում իւր և նրանց մէջ բացած վիհը: Պէտք է այսպէս
թէ այնպէս կուել: Պէտք է մէկը միւսին գլորի—այդ անկասկած է:
Միւսնոյն շրջանում, միւսնոյն ժամանակ երկու հակադիր ձգտումներ
չեն կարող հաւասար համակրութիւն վայելիլ և իրանց գոյութիւնը
շարունակել:

Առաջ այդ մարդիկ հաշտ էին, գաղափարակից էին, ընկեր
էին նրա հետ: Նրանք ուխտել էին միասին գործել, այժմ բա-
ժանուած են: Կեանքը տւեց մէկին մի ուղղութիւն, միւսներին այլ
ուղղութիւն: Գուցէ մոքերի այս հակադրութիւնը առաջ էլ կար,
միայն չէր արտայայտուում: Այժմ ասպարէզ կայ, նա երևան է
գալիս: Բարաթեանը և Վէքիլեանը աշխատում են խոչնդոս լինել
նրա դործունէութեանը, ծաղրում են, հալածում և հարւածում,
կընշանակէ նրանք թշնամիներ են:

Սակայն նոր հողաբարձուները դեռ լուռ էին, չընայելով, որ
երկու ամիս էր արդէն հաստատուել էին իրանց պաշտօնում:

Բարաթեանը ուսումնասիրում էր հանգամանքները: Շաբաթը
մէկ կամ երկու անգամ նա այցելում էր դպրոցը: Գիմաքսեանը
նրան ընդունում էր պաշտօնական ձևով, խօսում էր սրու-ով, բայց
սառն և առանց ընկերական մտերմութեան: Դպրոցի տնտեսականի
և վարչականի վերաբերմամբ նա նոր հողաբարձուին տալիս էր
մանրամասն տեղեկութիւններ: Բայց երբ հարց էր լինում ուսում-

նականի և բարոյականի մասին, նա խոյս էր տալիս պատասխաններին և առհասարակ չէր ուզում խօսքը երկարացնել։ Նա կամենում էր հէնց առաջին քայլից նոր հոգաբարձուին զգալ տալ նրա իրաւունքների սահմանը։

Բարաթեանը, հարկաւ, հասկանում էր նրա միտքը։ Նա ոչինչ չէր ասում, բայց մտքում կրկնում էր.

«Եթէ դու ուզում ես քեզ ցոյց տալ, ես էլ շուտով ինձ ցոյց կը տամ»։

Մեծ պասի առաջին օրերն էին։ Տրամադրութիւնը կրօնական էր, դպրոցը—հոգևոր։ Հոգաբարձուներից երկուսը եկեղեցասէր վաճառականներ էին, մէկը եպիսկոպոսի եղբայր, երկուսն էլ երէցփոխներ։ Բարաթեանը մի նիստում թեթեւ կերպով հարց բարձրացրեց՝ արդեօք աշակերտների կրօնական կրթութեան վրայ բաւարար ուշադրութիւն դարձնում են դպրոցում։

Նախագահի կարմիր և առոյգ դէմքի վրայ խաղաց գոհունակութեան ժպիտը։ Նա իւր երկար, թիաձև, չալ միրուքը շփելով, յայտնեց, թէ այդ հարցով ինքն էլ զբաղած է։ Աւելացրեց, թէ խնդիրը վերին աստիճանի կարևոր է, բայց ինքը չէր կամենում նախկին հոգաբարձութեանը առաջարկել, սպասում էր նորերի ընտրութեանը։ Այժմ նա կարող է խօսել, և սկսեց խօսել.

— Հրամանոցդ յայտ է, որ մեր դպրոցները գտանին իներքոյ հովանաւորութեան Հայաստանեայցս առաքելական եկեղեցոյ և Նորին Վեհափառութեան Տեառն Տեառն սրբազնագոյն կաթողիկոսին ամենայն հայոց։ Այսպէս Գերազնիւ պարոնայք, մենք ժամու և ի տարաժամու պարտ ենք երախտապարտ և ջերմեռանդագոյն հոգով զգացած լինել առ մերս առաքելական եկեղեցի հարսնացեալն ի Տէրն Մեր Յիսուս Քրիստոս և Նորին ասուածընտրեալ Պեան, յաղագս կենաց որին աղօթեմ ի տունջեան և ի դիշերի։ Այսպէս։ Սակայն իմ հոգևոր տկար աչօքս այս վերջին տարիներ այլ և այլ խուսափումներ նկատում եմ ի մեծս և փոքունս, իսկ առաւելագոյն չափով ի մերում դպրանոցի։ Յուսամ առ Ամենաբարձրեայն, որ այսուհետև այդ զանցառութիւնները վերացւին, քանզի մեր հոգաբարձութիւն այսօր, յուրախութիւն սրտի իմն, կազմին ձեզի պէս գերաշնորհ, պայծառամիտ, խոհունակ, հանճարա-

զարդ և պարկեշտասուն անձինք: Այսպէս: Պարոն քարտուղարէն կը խնդրէի արձանագրել այս իմ համեստագոյն խօսք—տոննաբանութիւն:

—Ձեր ասածը միանգամայն արդարացի է: Մեր աշակերտների մէջ պէտք է զարգացնել բարոյականութիւն, մանաւանդ կրօնասիրութիւն: Արևմտեան Եւրոպայում կրօնի դասաւելութիւնը շատ չարգելի տեղ է բռնում դպրոցներում: Ուրեմն այն, ինչ-որ ընդունւած է լուսաւորւած ազգերի մէջ, կարծում եմ, չը պիտի արհամարհուի մեզ նման մի փոքրիկ ազգի կողմից:

—Պարոն քարտուղարէն կը խնդրէի շնորհազարդ պարոն Բարաթեանի խօսքերը արձանագրել:

—Այդ ճշմարիտ է, մանաւանդ որ մեր դպրոցը հոգևորական է:

—Պարոն քարտուղար, բարեճնունդ Ամբակում ս զա Սարգափեանի խօսքեր մէկիկ մէկիկ թարգմանեցէք ու շարագրեցէք:

—Բացի դրանից, մենք նախ և առաջ կրօնական ազգ ենք և եկեղեցուց աւելի ոչինչ չունենք:

—Պարոն քարտուղար, ուշի ուշով դիտեցէք ողջախոհ պարոն Վէքրիլեանի ասածներս: Ի՛նչ, հեր օրհնած, ի՛նչ ես Բեթանիացի բորտի պէս քինթոյ քորում: Այսպէս, զերազնիւ պարոնայք, խնդիրը եղբափականք: Ըստ իս՝ վաղը մեր մեծապատիւ պարոն տեսչին յայտնելու է այս մեր որոշում: Շնորհազարդ պարոն Բարաթեան, կարծեօք, այս պարտքը ձեր վրայ դնելու է, քանզի, եթէ չեմ սխալւում, դուք էք հերթակալը: Պարոն քարտուղար, արձանագրեցէք մեր որոշում այսպէս. «Առաջարկեալ եղիցի վերատեսչին պարոն Արսէն Մարգարեան Դիմաքսեանի՝ չարգել զկրօն ըստ չափու պահանջման հոգաբարձութեանս և զսանս դպրանոցի հանապաօրեայ առաջնորդել յեկեղեցի անձամբ»:

Հին հոգաբարձուներից մէկը, որ նորից ընտրուել էր, նկատեց, թէ տեսչի համար վիրաւորական է այս տեսակ որոշում՝ «չարգել զկրօն», քանի որ նա առանց այդ էլ չարգում է կրօնը:

Նախագահը խնդիրը քէտարկեց, և ձայների ճնշող մեծամասնութեամբ նրա որոշումը ընդունեց:

Հետեւեալ օրը Բարաթեանը Դիմաքսեանի մօտ կարդաց արձանագրութիւնը: Մի արհամարհական ժպիտ փոփոխեց տեսչի դէմքը, յետոյ՝ նրա կրծքից թռաւ մի կծու ծիծաղ:

—Ինչո՞ւ ես ծիծաղում:

—Նրա համար, որ քիչ է մնում ինձ հերետիկոսութեան մէջ մեղադրէք: Լուսած բան է այդ տեսակ որոշում մտցնել մի պաշտօնական արձանագրութեան մէջ, որի տակ ստորագրել են տասնութից հասարակական ներկայացուցիչներ: «Յարգել զիրօն», ասա խնդրեմ, երբ եմ ես արհամարհել կրօնը:

—Ոչ ոք չէ ասում, թէ արհամարհել ես, միայն այսպէս գըրլած է: Դու գիտես, որ դպրոցը հոգևոր է:

—Յետո՞յ:

—Ուրեմն զարմանալի բան չը կայ այս որոշման մէջ:

—Զարմանալին այն է, որ այդ կրօնապաշտական դատավճռի տակ ստորագրել էք դու և Վէքիլեանը: Դա բաւական չէ, հարցը մինչև անգամ դու ես զարթեցրել:

—Ես զարթեցրել եմ մի շատ ժամանակակից հարց:

—Ախ Բարաթեան, ինքդ էլ շատ լաւ գիտես, որ կեղծում ես, որ այդ սուտ է, չես հաւատում, ծիծաղում ես մտքումդ:

—Մի՞թէ դու համաձայն չես, որ պէտք է աշակերտների մէջ կրօնական զգացմունք զարթեցնել:

—Զգացմունք և ոչ փարիսեցութիւն:

—Ասում են աշակերտներին թոյլ չես տալիս եկեղեցի գնալու:

—Սուտ են ասում: Ես աշակերտներին ուղարկում եմ եկեղեցի կիրակի և տօն օրերը, երբ նրանք ազատ են դասերից:

—Իսկ մի՞ւս օրերը:

—Պարտաւորական չէ, բայց կարող են գնալ, եթէ կամենում են: Ես երբէք նրանց միտքը և զգացմունքը չեմ բռնաբարում:

—Հէնց այդ է, որ, իմ կարծիքով, կարող է նրանց փչացնել:

—Այսինքն ի՞նչը:

—Այն, որ չէ կարելի մանուկների և պատանիների զգացմունքները ազատ թողնել իրանց կամքին, առանց որ և է ուղղութեան:

Դիմաքսեանը զայրացած նայեց ընկերոջ երեսին: Նրան թւաց, թէ իւր առաջ կանգնած է մի սուտ ճգնաւոր և ոչ մի դիպլոմատոր երիտասարդ: Նա ասաց, թէ ոչ մի զգացում—լինի նա կրօնական թէ ուրիշ—չէ կարելի բռնի ուժով արմատացնել ուրիշի:

սրտում: Պատիժը, երկիւղը, նոյն իսկ խրատը չեն կարող փոխել սաների բարոյական կազմը: Մարդու սրտում պատւաստում և արմատ է ձգում այն զաղափարը, որ ազատ սիրելուց է առաջանում: Վերջապէս, բռնութիւնը և արւեստական կերպով պատւաստւած զգացումը շատ անգամ հակառակ հետեանք է ունենում:

—Ուրեմն, դու հերքում ես կրթութեան նշանակութիւնը,— հարցրեց Բարաթեանը ժպտալով,—դու չես ընդունում զեկալարի կամ առաջնորդող մարդու ազդեցութիւնը:

—Ազդեցութիւն և ոչ բռնութիւն: Ի՞նչ ես կարծում, տասներկու կամ տասնութ տարեկան պատանիների համար ձրն է ազդու՝ սպառնալիքը, թէ կենդանի օրինակը: Եթէ դուք կրօնի անունով աշակերտին ստիպում էք եկեղեցի գնալ, ի՞նչ կը մտածի նա, տեսնելով, որ դուք ինքներդ եկեղեցի չէք յաճախում, փախչում էք նրանից, ինչպէս մի աւելորդ բեռնից: Վերջապէս, ի՞նչ կարիք կայ երկար վիճելու, իմ պատասխանը մէկ է. ես համաձայն չեմ, որ հոգաբարձութիւնը խառնի դպրոցի ուսումնական-բարոյական մասի մէջ: Նա իրաւունք էլ չունէ:

Դիմաքսեանը քանի գնում, այնքան աւելի զրգուում էր և ձայնը բարձրացնում: Բարաթեանը խօսում էր սառն, անվրդով: Հէնց այդ էր, որ աւելի բորբոքում էր նրա հակառակորդին:

Մի բան շատ պարզ էր Դիմաքսեանի համար—ընկերոջ բուն նպատակը: Ուստի նա որոշ և դրական եղանակով ասաց.

—Ես չեմ ընդունում ձեր որոշումը:

—Այո:

—Այո:

Եւ դուրս եկաւ սենեակից վրդովւած: «Ահա ինչ ծայրից են սկսում,—ասում էր նա մտքում,—քիչ է մնում ինձ անստուած հրատարակեն»:

Նա համոզւած էր, որ իւր բոլոր պաշտօնակիցները նոյնպէս կը վրդովեն հոգաբարձութեան դէմ: Բայց իր քան մեծ եղաւ նրա զարմանքը, երբ նրա զայրացումը հանդիպեց ընդհանուր լռութեան:

Բոլոր ուսուցիչները նայեցին միմեանց երեսին: Կարծես, ամեն մէկը սպասում էր, որ միւսը խօսի: Այդ լռութեան մէջ Դիմաքսեանի համար կար մի վիրաւորական, միևնոյն ժամանակ, առեւի

բան: Դա այն ընդհանուր երկիրն ու տատանումն էր, որ երևում էր ամենքի, նոյն իսկ իւր կողմնակիցներին, դէմքերի վրայ: Նա ասաց, թէ հերթակալ հոգաբարձուին յայտնել է, որ հոգաբարձութիւնը իրաւունք չունէ խառնել զպրօցի ուսումնական-բարոյական գործերի մէջ: Նա յոյս յայտնեց, որ ամենքը համաձայն են այս մտքի հետ և հարկաւոր եղած ժամանակ նրան ձայնակից կը լինեն:

Համր լռութիւնը Գիմաքսեանի միակ պատասխանը եղաւ:

— Ինչո՞ւ էք լռում, — գոչեց նա:

— Սկզբունքով համաձայն ենք, — խօսեց, վերջապէս, նրա կողմնակիցներին մէկը, — բայց գործնականապէս եթէ...

— Եթէ:

— Եթէ հոգաբարձութիւնը կամենայ խառնել, մենք ի՞նչ կարող ենք անել: Նա իշխանութիւն է, մենք ստորադրեալներ:

Գերմանական մանկավարժ Ինիաթեանը քնթի տակ ծիծաղեց, ծաղրաբար և անհոգ քայլերով դուրս եկաւ: Միւսները ոչինչ չ'ասացին:

Խնդիրը շատ պարզ էր Գիմաքսեանի համար: Մի վայրկեան նա կարողացաւ իրան զսպել և հեզնաբար ասաց.

— Ձեր ասածը ճիշդ է. նրանք իշխանաւորներ են, մենք ստորադրեալներ, այսինքն անբան ստրուկներ: Ուրիշ ոչինչ, պարոններ, գնացէք, զանգակը դասի է հրաւիրում:

VIII

Նա մնաց միայնակ ուսուցչական սենեակում, միայնակ իւր բոլոր սկզբունքների և համոզմունքների հետ: Կրկին անգամ զգաց, թէ որքան դժուար է մարդկանց հաւատ ընծայելը: Ուրեմն ոչ ոք ձայն չը բարձրացրեց անարդար ոտնձգութեան դէմ, ոչ ոք չը պաշտպանեց և չը պիտի պաշտպանի նրան: Կը նշանակէ՞ նրա կողմնակիցները հասկացել են հակառակ կուսակցութեան ոյժը:

Վախ, վախ, միշտ մի կտոր հացի համար վախ, ահա այն հրէշը, որ ջլատում է մարդկանց բարոյական ոյժը:

Նա ձեռը ուժգին զարկեց սեղանին, ոտքի կանգնեց: Երբ յետ նայեց, տեսաւ մենակ չէ: Սենեակի ծայրում կանգնած

էր Ինիաթեանը և, ձեռները մէջքին դրած, անհող կերպով նայում էր պատին:

—Մեծ մարդ է եղել հանգուցեալը, —ասաց նա, ցոյց տալով ներսէս Սշտարակցու պատկերը:

—Այո, մեծ մարդ է եղել, պարոն Ինիաթեան:

—Ասում են, երբէք չէր յուսահատուում խոչնդոտների հանդիպելիս: Հէնց այդ բանն է մարդկանց մեծացնում: Յուսահատութիւնը թուլասիրաներին է միայն յատուկ: Հա, ի՞նչ էի ուզում ասել, այս երեկոյ, երևի, ուսուցչական ժողովը չի կայանալ:

—Ինչո՞ւ:

—Որովհետև բոլոր աւագ ուսուցիչները հրաւիրւած են հողաբարձու պարոն Վէքիլեանի մօտ:

—Հրաւիրւած են:

—Միթէ դուք չը գիտէիք, ձեզ չէ՞ հրաւիրել: Ձարմանալի է: Խնձոյքի նման մի բան է սարքել: Ասում են նպատակ ունէ պարոն Վէքիլեանը, այսինքն ուզում է ուսուցիչների հետ բարոյական կապ հաստատել: Ուրեմն ժողովը կը յետաձգէք, չէ՞:

—Եթէ Վէքիլեանի խնձոյքը աւելի հետաքրքրական է ձեզ համար, պէտք է ժողովը յետաձգել:

Ինիաթեանը, քնթի տակ երգելով, դուրս գնաց:

Այդ օրը Դիմաքսեանը ախորժակ անգամ չունեցաւ ճաշելու, այնքան վրդովւած էր: Սիրականը այնպէս սովորել էր նրա բնաւորութեանը, որ խիղջն հասկացաւ, թէ նա շատ վատ է տրամադրւած: Նա հողում էր Դիմաքսեանի մասին ինչպէս մի սիրող, զգայուն եղբայր: Նա պատրաստ էր ամեն բոպէ մահու և կեանքի կռի մէջ մտնել նրա համար, եթէ միայն այդ հարկաւոր լինէր: Եւ Դիմաքսեանը լիովին հուստում էր նրա անկեղծ հաւատարմութեանը: Ուրախալի էր նրա համար անկիրթ ժողովրդի այդ հարազատ զաւակի մէջ տեսնել այդքան սէր:

Իրիկնադէմին նա գնաց Մսերեանի մօտ, ուր միշտ գնում էր, երբ յուզւած էր լինում:

Իդէալիստը այս անգամ անսովոր աշխոյժ ստացած անց ու դարձ էր անում սենեակում, ինքն իւր հետ ձեռներով խօսելով: Բանն այն է, որ նա այդ օրը պաշտօն էր ստացել մի արքունական

հիմնարկութեան մէջ և վաղւանից պէտք է սկսէր ծառայել: Նոյն րոպէին նա մտքում հաշուում էր—արդեօք պաշտօնը նրա ամբողջ ժամանակը պէտք է խլէ, թէ կարգալու համար ազատ ժամեր կը թողնի:

Դիմաքսեանը շնորհաւորեց նրան:

—Բայց դու ինչո՞ւ տխուր ես,—գոչեց Մսերեանը,—էլի ո՞վ է էշիդ կաղ ասել:

Դիմաքսեանը պատմեց օրւայ եղելութիւնը: Մսերեանը, ինչ ասել կուզէ, վրդովեց: Ինչպէս, Բարաթեանը կրօնի և եկեղեցու պաշտպան է դարձել: Ուրեմն նա ուզում է ծախել այն, ինչ-որ չունէ:—Դա բարոյական գողութիւն է:

—Եւ նա խօսում էր համոզւած, ինչպէս ճշմարիտ քրիստոնեանց:

Դիմաքսեանը հեզնաբար ժպտաց: Միթէ կարող է համոզուիլք լինել մի բան, որ մարդու հոգուց չէ բղխում: Դա մի վտանգաւոր զէնք է նրա դէմ, ուրիշ ոչինչ: Օ՛, Բարաթեանը խելօք է, շատ լաւ է ճանաչում հասարակութեան թոյլ երակը: Նա ուզում է Դիմաքսեանի վարկը կտրել, նրա հեղինակութիւնը ոտնատակ անել, ահա նրա նպատակը:

—Ներողութիւն, — ընդհատեց Մսերեանը ընկերոջ խօսքը, — նա ինչպէս կարող է քո հեղինակութիւնը ոտնատակ անել:

—Հրատարակելով ինձ անկրօն: Դա, ի հարկէ, նրան կը յաջողւի, մարդկանց փոփոխամտութեան շնորհով: Երևակայիր, ամբողջ մեր ուսուցչական խմբի մէջ այսօր մէկը չը գտնուեց, որ ինձ հետ բողոքէր: Ես քնացի մենակ, հասկանում ես, մենակ:

Եւ նա աւելացրեց, որ այսուհետև ամենքը իրանից պիտի երես դարձնեն: Նա հաղորդեց Վէքիլեանի հացկերոյթի մասին: Նա հասկանում է, ինչ ասել է բարոյական կապ, Վէքիլեանը կամենում է նրա դէմ զինել ուսուցիչներին:

Մսերեանը գլուխը շարժեց:

—Ինչո՞ւ ես ժպտում, միթէ դու իմ տեղը լինէիր, չէիր յուսահատւիր:

—Ե՞ս. ո՞չ:

—Ո՞չ:

—Զէի յուսահատւիր: Նախ և առաջ ես քո տեղը երբէք

չեմ կարող լինել, Ոյ ինձ նման քամի կուլ տուողին սեմինարիացի
ինսպեկտորի պաշտօն կը տար: Երկրորդ, եթէ ես քո տեղը լինէի,
խփոյն դգակս կը վերցնէի, կասէի՝ մնաք բարով, հօրս ցաւը ձեզ էլ
ու ձեր զպրօցին էլ:

— Այդ կը նշանակէ չը յուսահատուէի: Բայց ես զոնէ այդպէս
չեմ անուամ, ես միայն վրդովուամ եմ:

— Դու այդ էլ չը պիտի անես:

Դիմաքսեանը զարմացած նայեց ընկերոջ երեսին: Նա բոլո-
րովին ոչինչ չէր հասկանում նրա հակասական խօսքերից: Մի բո-
ւական նրանք լուռ էին:

Մտերեանը, նայելով իւր ծխախոտի ծայրին, ինքն իւր հետ
խորհրդածութեան մէջ էր: Պարզ էր, որ նա մի բան ուզում էր
ասել, բայց չը գիտէր որ կողմից սկսել:

Վերջապէս, նա, ձեռը խփելով Դիմաքսեանի ծնկին, ասաց.

— Գիտես ինչ, Արսէն, ես քանի անգամ ասել եմ, որ դու ինձ
կրթէք օրինակ չը վերցնես քեզ համար: Դու ուրիշ մարդ ես, իսկ ես
ուրիշ: Մենք հակատիպարներ ենք:

Ճիշդ է, նա գգակ կը վերցնէր ու զպրօցից դուրս կը գար,
բայց երբէք չէր կամենալ, որ իւր ընկերն էլ այդպէս անի: Չէր
կամենալ մինչև անգամ, որ նա յուսահատուի մազաչափու Վաղուց,
շատ վաղուց նրա գլխում կազմել էր հասարակական գործիչի
լիակատար իդէալը: Ո՞վ գիտէ, որքան նա բազդաւոր մարդ կը հա-
մարէր իրան, եթէ կարողանար տասներորդի չափ լինել այն, ինչ-որ
նրա կարծիքով պէտք է լինի հասարակական գործիչը: Բայց նա
զգում էր, որ չէ կարող և հէնց աւելի ցաւալին էր այդ, որ
զգում էր:

— Իսկ դո՛ւ կարող ես լինել, — շարունակեց նա ոգևորւած, —
եթէ միայն աշխատես: Բայց դու, Արսէն, դեռ, ներիր որ պարզն
եմ ասում, դեռ շատ անեփ ես, անեփ թէ ինչպէս ընկերական
մարդ և թէ ինչպէս գործի մարդ: Քանի քանի անգամ ես տեսել
եմ, որ ամեն մի չնչին բան քեզ յուսահատեցնում է կամ խրա-
խուսում, ոգևորում: Երբէք ես չեմ մոռանալ այն օրը, երբ մի
ինչ-որ լրագրի յօդածից, մի վայր իվերոց գրւածքից քիչ էր մնում
խելագարէիր: Վարձես, չը գիտէիր, որ այդ թուղթ մրտադնների

հարիւրից իննըսուն իննը շարժեն ընկուզի կճեպին: Ձեմ մոռանալ
և՛ այն օրը, երբ դու ոգևորած և հիացած պատմում էիր, թէ
ինչպէս քեզ ընդունել են քո հայրենի քաղաքում:

Եւ մի քանի վայրկեան լռելուց յետոյ, իդէպիստը շարունակեց,
ձայնի տոնը փոխելով և աւելի սառն կերպով: Նա ասաց, թէ բուն
հասարակական գործիչը այդպէս չէ լինում, նա հեռու է մնալառու-
թեան վտանգաւոր ախտից: Նրա համար նշանակութիւն չունեն ոչ
ծափահարութիւնները և ոչ հալածանքները: Նա ոչ ոքից չէ
սպասում ոչ վարձատրութիւն, ոչ երկրպագութիւն: Նա իւր վարձը
և խրախոյսը պտրում է իւր անձնաւորութեան մէջ և այնտեղ է
գտնում: Նրա բարոյական մտունդը, նրա հոգեկան քաջութեան
միակ աղբիւրը իւր սիրտն է, իւր ներքին աշխարհը: Այնտեղ է նա
որոնում գովասանքն էլ, պարսաւանքն էլ: Այնտեղ է նա զգում
և՛ ծափահարութեան ձայնը և՛ անաչառ, խիստ քննութեան հար-
ւածները: Դրսի աշխարհը այս դէպքում նրա համար գոյութիւն
չունէ:

Նա դարձեալ լռեց, նայեց ընկերոջ երեսին և ապա աւելացրեց.
— Ասա, այսպէս է, թէ չէ, հերքիր, եթէ սխալում եմ:

Բայց Դիմաքսեանը լուռ էր և ուշադիր լսում էր ընկերոջը:
Նա համաձայն էր նրա ասածների հետ, նա ինքը վաղուց այդ
բանը գիտէր: Բայց լսել մի ուրիշից այդպէս բացարձակ, անկեղծ
և խիստ կերպով ծանր էր նրա համար, թէ կուզ այդ ուրիշը լինէր
նրա ամենամտերիմ ընկերը:

Նա վախենում էր նայել Մսերեանի երեսին, որ այդ բոպէին այն-
քան խիստ, երկիւղալի, բայց և յարգելի էր նրա համար: Նա
զգում էր իւր դէմ նստած մի անողոք բուժիչ: Սուր դանակը ձե-
ռին, սառնութեամբ այդ բժիշկը օպերացիայի էր ենթարկում նրա
հոգու ամենաթոյլ, ամենահիւանդոտ մասերը: Բայց նա գիտէր, որ
այդ խստութիւնը առաջանում է միմիայն հիւանդին բուժելու ան-
կեղծ և ջերմ ցանկութիւնից: Նա դողում էր, յուզւում, բարկա-
նում, բայց և չէր ընդդիմանում այդ անողոք վերլուծութեանը:

Գունատ դէմքով, աչքերը խոնարհեցրած, շնչասպառ և
դժւարութեամբ արտասանեց.

— Շարունակիր:

Մտերեանը ասաց, թէ իւր ասելիքը վերջացրել է: Նա աւելացրեց միայն, թէ իւր շրջանին, հասարակութեան, վերջապէս, մարդկութեանը ծառայող ամեն մի փոքր թէ մեծ մարդ ունէ մի որոշ իղէալ: Նա մաղթեց, որ Արսէնի բարձրագոյն իղէալը լինի նա, Որին ոչ մի իղէալ չէ կարող հասնել: Նրան չը ծափահարեցին, այլ հալածեցին, որովհետեւ օտարոտի գաղտփարներ էր քարոզում: Բայց նա չէր յուսահատուում, այլ գործում էր մարդկային տգիտութեան դէմ: Նա ցաւ չէր զգում մինչև անգամ այն ժամանակ, երբ բեռուած էր:

— Որովհետեւ նա իւր սրտի խորքում, գիտեւ, այստեղ, ունէր անսահման սիրտանքի և բերկրութեան աղբիւր: Դա ասուածային լոյսն էր: Այն, նա է բուն մարդը, ով այդ լուսոյ գոնէ մի նշույն ունէ իւր մէջ: Առանց նրա չը կայ ճշմարիտ մարդ, չը կայ մանական ուրիշներին յգտաւէտ լինել կամեցող մի անհատ:

Նա վերջացրեց խօսքը և սկսեց անցուդարձ անել սենեակում: Արդէն օրը բաւական մթնել էր: Նա պարզ չէր տեսնում Դիմաքսեանի դէմքը, և եթէ տեսնէր, պէտք է այնտեղ կարգար իւր խօսքերի խոր ազդեցութիւնը:

— Ի հարկէ, դու ինձ կարող ես Ֆրազեօր համարել: Բայց այդ ինձ համար միւլնոյնն է, միայն թող իմ կարծիքը քեզ չը վիրաւորի: Դու շատ լաւ գիտես, որ մի ուրիշի հետ այսպէս պարզ չէի խօսիլ: Բայց քեզ սիրում եմ և յարգում:

— Ծնորհակալ եմ, — մրմնջաց Դիմաքսեանը խուլ ձայնով, — շնորհակալ եմ:

Եւ մի քանի վայրկեան լռելուց յետոյ, հառաչելով աւելացրեց.

— Այն, ես անեփ եմ, ես շատ թերութիւններ ունեմ:

IX

Պայիանէի թախիծը քանի դնում, այնքան սաստկանում էր: Դեռ առաջին մի քանի ամիսները նորածինը զրաւել էր նրա միտքը: Չար կասկածը տեղի էր տւել մայրական անդրանիկ սիրոյ զգացմանը: Բայց անցան այդ ամիսները, և նա դարձեալ ենթարկեց մի անգամ արդէն իւր սրտի մէջ արմատ ձգած տանջանքին:

Շատ անգամ ամուսինների մէջ տեղի էին ունենում ընտանե-

կան անախորժ տեսարաններ: Մարդը, հարկաւ, աշխատում էր փարատել կնոջ կասկածը, բայց իզուր: Եթէ ամենքը շաւտացնէին, դարձեալ Գայիանէն չէր համոզւիլ, թէ միմիայն ինքն է սիրելի իւր ամուսնու համար և թէ Իսակը ուրիշ ոչ ոքի վրայ աչք չունէ: Գալով փաղաքշանքներին, այտեղ էլ Գայիանէն զգում էր մի կեղծիք, մի նուրբ փարիսեցութիւն: — Մի բան, որ տեսնում էր իւր ամուսնու հասարակական կեանքի մէջ էլ, Ուր է այն հոգեկան զօրութիւնը, որ սպասում էր նա, թէ մի օր պէտք է երևան զայ: Ուր են այն բարոյական անխախտ սկզբունքները, որ տղամարդին ասուածացնում են կնարմատի աչքում, իսկ կնոջ սիրտը լցնում հպարտ պարծանքով իւր մարդու վերաբերմամբ: Ինչու նրա և Գիմաքսեանի մէջ ծագեցին այդ երկպառակութիւնները: Զէ որ նրանք գաղափարակից ընկերներ էին, կը նշանակէ երկուսից մէկը փոխեց իւր հայեացքները:

Ո՞րը փոխեց, — հարցնում էր ինքն իրան Գայիանէն, և մի ներքին ձայն նրան պատասխանում էր, թէ ոչ-Գիմաքսեանը:

Եւ որքան Բարաթեանը արհամարհանք ցոյց տար դէպի այդ մարդը, սակայն նուրբ բնազդումով Գայիանէն զգում էր, թէ Գիմաքսեանն է գաղափարի մարդ, նա է որոշ և անխախտ համոզմունքների տէր: Նրան թւում էր, որ յաճախ իւր ամուսինը այդ մարդու դէմ խօսում է նախանձից դրդած:

Մի անգամ Գայիանէն, չը կարողանալով իրան զսպել, մի այդպիսի ակնարկութիւն արեց:

Բարաթեանը բարձրաձայն ծիծաղեց և երեսը լետ դարձրեց: Բայց արդէն նկատելի էր, որ նրա ծիծաղը և արհամարհանքը դէպի Գիմաքսեանը արւեստական են դառնում և կնոջ պաշտպանութիւնը վրդովեցնում է նրան: Իսկ Գայիանէն նայեց ետևից նրա առողջ պարանոցին և մի տեսակ ատելութիւն զգաց: — Մի տարօրինակ, անբացատրելի ատելութիւն, որ առաջին անգամն էր զգում:

Մի ուրիշ անգամ Գայիանէն բացարձակ չայտնեց իւր ամուսնուն բոլոր այն յոյսերը, որ դրել էր նրա վրայ: Նա շատ բան էր սպասում Բարաթեանից: Նա կարծում էր, թէ ահա գտել է, վերջապէս, այն մարդուն, որ կարող է իրագործել նրա իղէալը տղամարդի մասին:

—Ես շատ բան էի պահանջում տղամարդից, ով գիտէ, գուցէ անիրազործելի բաներ: Բայց չէ որ դու էլ այն ժամանակ գոնէ բերանացի համոձայնում էիր իմ պահանջների հետ: Կարելի է ես երեխայ էի, անփորձ, միամիտ, աշխարհի վրայ վարդազոյն աչքերով էի նայում: Բայց այժմ ես չափաւորել եմ իմ պահանջները և տեսնում եմ, որ էլի խաբւած եմ, որ ամենաշնչին յոյսս անգամ չէ իրազործւում: Իսակ, այժմ ես քեզանից ոչինչ չեմ ուզում, ոչինչ, բացի մի բանից, այն է, որ դու այս չար կասկածը հանես իմ սրտից:

Նրա աչքերի մէջ փայլեց ներքին հողեկան դառնութիւնը: Նա մի եռանդուն ճիգ արեց և զսպեց իւր արտասուքը:

Բարաթեանը մի վայրկեան նայեց նրա երեսին և մի ինչ-որ միտք անմիջապէս թելադրեց նրան փոխել: Նրա դէմքից չքացաւ կծու հեզնութեան ժպիտը, տեղի տալով մեղմ և փաղաքշական արտայայտութեանը: Նա հանդարտ մօտեցաւ Գայիանէին, բռնեց նրա ձեռքը և, նայելով նրա աչքերին, հարցրեց.

—Ո՞ւմ դէմ է քո կասկածը:

—Օ՞, մի՛ հարցնիլ ինձանից, մի՛ հարցնիլ, չեմ՝ կարող ասել...

—Գայիանէ, դու իրաւունք չունես, գիտես, իրաւունք չունես ինձ սրբապիղծ մարդ համարելու:

Այս խօսքերը նա մի այնպիսի եղանակով արտասանեց, որ մի վայրկեան Գայիանէի սիրտը, կարծես, թեթեւութիւն զգաց: Նա թոյլ տւեց ամուսնուն իրան համբուրել: Բայց անցաւ այդ վայրկեանը, երբ նա նայեց մարդու աչքերին: Այնտեղ, այն քնքոյշ և մեղմ արտայայտութեան տակ, Գայիանէն տեսաւ մի աւելի կեղծ բան, որ միայն նրա համար էր նշմարելի:

Նա կամացուկ իւր ձեռք ազատեց մարդու ձեռներից և մի քայլ յետ կանգնեց:

Բարաթեանը հասկացաւ այդ շարժման իմաստը և երեսը յետ դարձրեց: Նա դիտէր, որ դժւար, մինչև անգամ անհնարին է փարատել երիտասարդ կնոջ զգայուն սրտի մէջ բուն դրած կասկածը: Ուստի բարւոք համարեց լսօսակցութիւնը չ'երկարացնել:

—Բայց արդէն ժամանակ է ճաշելու, սիրելիս,—ասաց նա

զւարթ եղանակով, — որքան էլ բանաստեղծական լինենք, ստամոքսը իւր ուզածն է պահանջում:

Նա շահցնելով անցաւ սեղանատուն:

Նոյն օրերը կանանց ընկերութեան օգտին ժողովարանի դահլիճում երեկոյթ էր նշանակած: Գայիանէն վճռել էր չը գնալ, բայց ամուսինը սաստիկ թախանձեց նրան, որ յամառութիւն չ'անի: Անկարելի է, վերջապէս, բոլորովին երես դարձնել հասարակութիւնից: Ի՞նչ կը մտածեն մարդիկ, միշտ նրան առանց կնոջ տեսնելով հանդէսներում: Ընտանեկան խռովութիւններ կարելի է ունենալ, բայց միշտ պէտք է ուրիշների աչքից քողարկւած պահել: Թող ամենքը համոզւած լինեն, որ նրանց մէջ տիրում է փոխադարձ սէր: Գայիանէն համաձայնեց ընկերանալ ամուսնուն:

Երեկոյթը բաղկացած էր նւագահանդիսից և պարերից: Մի հնամաշ դերասանուհի երգում էր մի ինչ-որ դրամատիքական երգ: Գայիանէն նստած էր իւր ամուսնու մօտ տխուր, լուռ և անտարբեր: Նրա դէմքի վրայ չը կար նախկին գրաւիչ ժպիտների նշոյն անդամ: Այդ դէմքը բարկացնում էր ամուսնուն, և սա ստէպ ստէպ շշնոււմ էր նրա կանջին, խնդրելով, որ գոնէ ուրիշների առաջ ուրախ ձևանայ:

«Ես ոչ կարող եմ կեղծել և ոչ կամենում եմ, պատասխանում էր Գայիանէն:

Նւագահանդէսը վերջացաւ: Բարաթեանները դուրս եկան դահլիճից մի փոքր անցուդարձ անելու: Հասարակութեան խուռն բազմութեան մէջ Գայիանէն նկատեց Դիմաքսեանին: Մի անկիւնում կանգնած՝ նա խօսակցում էր մի ինչ-որ պարոնի հետ: Տեսնելով Գայիանէին, նա սառն քաղաքավարութիւնով գլուխ տուց և կամենում էր երեսը կրկին դարձնել իւր խօսակցին, երբ տիկինը ձեռք մեկնեց նրան:

Դիմաքսեանը շփոթւած սեղմեց այդ ձեռքը, հարցնելով տիկնոջ աւողջութիւնը:

— Ենորհակալ եմ, — պատասխանեց Գայիանէն, — բայց ինչի՞ դուք մեղանից բոլորովին երես դարձրիք, այդ լաւ բան չէ:

Այս անկեղծ յանդիմանութիւնը կատաղի հակառակորդի կնոջ կողմից անսպասելի էր Դիմաքսեանի համար: Մինչ նա մտածում էր

ինչ պատասխանել, չը կամենալով ակնարկել փոխադարձ սառնութեան բուն պատճառը, Գայիանէն պարզութեամբ ասաց, թէ ինքը ամեն ինչ գիտէ:

— Ձեր կռիւը իմ ամուսնու հետ է, իսկ ես չէզոք մարդ եմ:

Նրա ձայնը այնքան մեղմ և անկեղծ էր, նրա հայեացքը այնքան պարզ և բարեհամբոյր էր, որ Դիմաքսեանը ակամայ մոռացաւ իւր ատելութիւնը: Այդ կապուտակ աչքերը զարթեցրին նրա մէջ անցեալի չիշատակները, և դարձեալ նրա սիրտը սկսեց բաբախել:

Բայց ինչո՞ւ յուզուել: Զ՞ որ Գայիանէն այժմ ուրիշին է պատկանում և այն էլ նրա հակառակորդին: Պէտք է հաստատամիտ լինել, սառնութիւն ցոյց տալ այդ կնոջ, որ այնպէս արհամարհեց նրան:

Այսպէս դատում էր Դիմաքսեանի խելքը: Այն ինչ՝ նա չէր զգում, թէ ինչպէս անցաւ կէս ժամ, մի ժամ, և դեռ խօսում էր նրա հետ:

Գայիանէն էր խօսակցութիւնը երկարացնողը: Եւ խօսում էր նա այնպիսի նիւթերի մասին, որ ակամայ շարժում էին Դիմաքսեանի հետաքրքրութիւնը: Միայն մի բանից էր խոյս տալիս Դիմաքսեանը—տիկնոջ ամուսնու հետ ունեցած ընդհարումներէրից: Մնացեալի վերաբերմամբ նա նոյնն էր, ինչ-որ առաջ—շուտ ոգևորւող, պարզ, անշեղ և երբեմն խստադատ:

Նա մազու չափ չէ փոխուել, նրա հայեացքները նոյնն են, կեանքը նրան չէ ազաւաղել, այդ պարզ է Գայիանէի համար:

Նրանք կանգնած էին դահլիճի դռներից ոչ հեռու, պատիտակ: Գայիանէն երբեմն նայում էր պարոզների կողմը: Նրա աչքերը ակամայ որոնում էին ամուսնուն և չէին գտնում: Նա մի քայլ առաջ գնաց և մօտեցաւ պարոզներին: Դիմաքսեանը հետևեց նրան: Վերջապէս, ահա նա... Տիկին Բախտամեանի հետ թև թևի տւած դուրս է գալիս դահլիճից: Երևի, շատ պարելուց յոգնել են, և տիկինը կամենում է սեղանատանը մի սառը բնով զովացնել իւր ծարաւը:

— Այստեղ սաստիկ տօթ է, անցնենք միւս դահլիճ, — ասաց Գայիանէն, ներքին խռովութիւնից շրթունքները ատամների տակ սեղմելով:

Դիմաքսեանը հետեւեց նրան ծանր քայլերով: Նա չը տեսաւ Բարաթեանին: Նա այլ ևս ոչինչ չէր տեսնում, չէր նկատում, չէր լսում, բացի Գալիանէից և նրա մեղմ, յոգնած ձայնից: Որքան փոխել էր երիտասարդ տիկինը նրա աչքում, որքան դունատ էր, նիհար, այճ, մինչև անգամ տգեղացած: Միթէ ընտանեկան հոգսերն են այդպէս ազդել նրա վրայ...

Կար ժամանակ, երբ Գալիանէն այդ մարդուց քաշուով էր, մինչև անգամ վախենում էր դէմ առ դէմ խօսել, և ինքն էլ չը գիտէր ինչու: Այժմ չբացել էր այդ երկիւղը: Այժմ նա խօսում էր ազատ, համարձակ: Հաճելի էր նրա համար մտածել, թէ մի ժամանակ այդ մարդը սիրել է նրան և գուցէ տանջել: Այդ միտքը նրան չէր շփոթեցնում: Զէ որ ամեն ինչ անցել է, այլ ևս չը կայ այդ սէրը, ուրեմն նրանք կարող են լինել բարեկամներ: Իրաւ, Գալիանէի համար ցանկալի է բարեկամ ունենալ Դիմաքսեանին, այդ խելացի, ազնիւ, զարգացած, գաղափարական մարդուն:

Նայում էր դէպի սենեակի հեռաւոր անկիւնը: Յանկարծ նա գունատեց: Նա արագութեամբ վեր թռաւ տեղից, ասելով.

— Կարծեմ, ժամանակ է տուն գնալու:

Նրանք մտան պարերի դահլիճը: Դիմաքսեանի ոտները դողում էին ներքին յուզմունքից: Նա ուրախ էր, երջանիկ էր: Նա ամբողջ ժամ ու կէս խօսել էր այն արարածի հետ, որից նա իրան ատւած և ծաղրած էր համարում:

Գալիանէի ետեւից նոյն սենեակից դուրս եկաւ նրա ամուսինը տիկին Բախտամեանի հետ: Նա տիկնոջ թեւը բաց թողեց ճիշդ այն վայրկեանին միայն, երբ Գալիանէն Դիմաքսեանին այլ տեսութիւնս ասաց:

Առանց միմեանց մի խօսք ասելու, մի ակնարկով մարդ ու կին հասկացան իրարու սրտինը: Նրանք դուրս եկան ժողովարանից թե թեի տւած—այսպէս կամեցաւ Բարաթեանը:

Կառքը նրանց սլացնում էր Թիֆլիզի փողոցներով. երկուսն էլ լուռ էին: Գալիանէն անընդհատ հառաչում էր, իսկ Դսակը անընդհատ շրւացնում և ցածր երգում:

Երբ տուն հասան, Գալիանէն խելազարի պէս վազեց երեսայի սենեակը, յարձակեց նրա վրայ և սկսեց արագ արագ ու ամուր

համբուրել: Երեխան զարթոնաց և լաց եղաւ: Գայեակը առաւ նրան իւր գիրկը:

Սեղանատանը ընթրիքը պատրաստ էր: Գայիանէն հրաժարուեց ուտելուց, մնաց երեխայի սենեակում և այնտեղ էլ գիշերեց: Իսկ ամուսինը ընթրեց հանգիստ ու զւարթ, ինչպէս միշտ, ծառայի հետ կատակներ անելով:

Միւս առաւօտ թէյին նա ժպտալով դարձաւ Գայիանէին.

—Հըմ, ի՞նչպէս ես երէկանից դէս:

—Շատ լաւ:

—Սրտիդ փափագը առի՞ր ընրանիցս:

—Իսկ դուք նոյնպէս ձեր սրտի փափագը առի՞ք ընրանիցս:

—«Մենք» «ձեր» ազգականուհու հետ էինք:

—Ես էլ ձեր ընկերոջ հետ էի:

—Նախկին ընկերոջ, այս մէկը երբէք մի մոռանար:

—Բաւական է,—գոչեց Գայիանէն վրդովւած,—երէկ, վերջապէս, պարզեց ձեր բարոյական պատկերը:

—Ի՞նչ ես ուզում ասել:

—Այն որ... այն որ... ես դժբաղդ եմ:

Եւ բռուն արցունքը, անզսպելի ուժով դուրս բղխելով, ողողեց նրա այտերը:

—Ինչո՞ւ ես լալիս,—ասաց մարդը սառն կերպով,—դու ինձ էիր փորձում, ես էլ քեզ փորձեցի:

—Ե՞ս, փորձում էի ձեզ,—արտասանեց Գայիանէն խեղզւած ձայնով,—ո՛չ, ես այդ տեսակ խաղեր չը գիտեմ, դա ստորութիւն է: Նա վերկացաւ տեղից և դուրս գնաց:

Մարդը հետեւեց կնոջը և տեսաւ, որ նա երեսը բարձի մէջ թաղած ուժգին հեկեկում է...

(Կը շարունակւի)